

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԹԵԼԵԹՈՆ 2006-ԷՆ ԵՏՔ

ՏՕԲԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Մեր նախորդ համարով կոչ ուղղեցի մեր ողջ հայութեան, որ իր ամբողջական գորակցութիւնը բերէ «Արցախի վերածնունդ ծրագրի մէջ» Հարթութի ի նպաստ կազմակերպուած թէլեթոնին, որ այս տարի կը բոլորէ իր 9րդ տարին: Հիմնուելով նախորդ թէլեթոններուն հայթայթուած գումարներուն որպէս հետեւանք նախաձեռնուած շինարարական դրական իրագործումներուն ներջնական փաստաւորեան վրայ՝ համոզուած լինելով, որ Հինգշաբթի 23 Նոյեմբեր, 2006-ին տեղի ունեցած թէլեթոնային հանգանակութիւնը եւս պիտի պսակուի յաջողութեամբ: Ուրախ ենք հաստատելու, որ իրականացուած մեր նախատեսութիւնը աւելի քան կրկնակի յաջողութեամբ, բաղադրուած նախորդներուն տուած շուրջ 7-ական միլիոն ԱՄՆ տոլարի արդիւններուն:

Այս տարի յատկանշականն այն էր, որ մեր նահանգէն ներս մեր բարեբար հայորդիներուն մասնակցողներու թիւը արձանագրած էր յորշակի ան: Նաեւ, շոշափելի մասնակցութիւն էին մեր հայրենի նուիրատուները: Ձեռք բացարձակ մնացեալ բոլոր երկրամասերէն ներս իրենց մասնակցութիւնը բերած նուիրատուները: Բոլորին հաւաքական նուիրատուութիւններու արդիւնք եղաւ մօտ 14 միլիոն տոլար:

ԱՄՆ-ի շրջանէն՝ դեռեւս երեք շաբաթներ առաջ Լիբանանի մեր կրթական հաստատութիւններուն 4.5 միլիոն տոլարի իշխանական օժանդակութիւն փութացնող «Լիմա»՝ ինչպէս միշտ, իր ձեռք, կրկին երկարեց, այս անգամ Հարթութի կրթական կեանքի վերականգնումի աշխատանքներուն, հայթայթելով 2 միլիոն ամերիկեան տոլար: Նոյնքան ուշագրաւ էր «Project Cure»- ի 2 մլն ԱՄՆ տոլարի յատկացումը բժշկական սարքաւորումներ փութացնելու համար Արցախի հիւանդանոցներուն: Ու այսպէս, իշխանական նուիրատուներու շարքը կ'երկարի: Հոն են Ամարասի նանայարհի կառուցման բարեբարութիւնը ստանձնող Գալիֆորնիա-նակ անձնաւորութիւններէն Վահէ Կարապետեան: Ստեփանակերտի թիւ 11 դպրոցի կառուցման յանձնառու, նոյնպէս Գալիֆորնիա-նակ ծանօթ բարեբար ձեռքի Թրփանեան: Հոն են Լուիզ Սիմոն Մանուկեան, Սարգիս Յակոբեան: Լեւոն եւ Գրիգոր Թերմենեանները:

Այդ շարքին մէջ է Մոսկուայէն՝ Արա Արրահամեան, Ստեփանակերտի դպրոցի կառուցման յանձնառու: Հայաստանէն՝ Տիգրան Մովսիսեան: Միխայիլ Բաղդասարով, Սամուէլ Ալեքսանեան, Ռուբէն Հայրապետեան եւ ուրիշներ:

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԹԵԼԵԹՈՆԻ ԸՆԹԱՑՔԻՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒՄԾ 13,7 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐԸ ՆՈՐ ՄՐՑԱՆԻՇ

Հինգշաբթի Նոյեմբեր 23-ին, Ամերիկայի Գոհաբանութեան օրուայ առթիւ տեղի ունեցաւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տարեկան դրամահաւաք-թեթեթոնը, որու ընթացքին հանգանակուած 13,7 միլիոն տոլար գումարը արձանագրեց նոր մրցանիշ:

12 ժամուայ վրայ երկարող յայտագիրը սփռուեցաւ Լոս Անճելէսէն: Հայաստան եւ աշխարհի տարբեր կողմերը հաղորդումը տարածուեցաւ Հայաստանի հեռատեսիլի ու անոր արբանեակային ծրագրի միջոցաւ:

Թեթեթոնին մասնակցելու նպատակով Լոս Անճելէս ժամանած էին Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Արկաղի Ղուկասեան, «Հայաստան» Հիմնադրամի գործադիր տնօրէն Տիգր. Նալբախ Մելքոնեան, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ Արք. Մարտիրոսեան եւ հարկերի բազմաթիւ արուեստագէտներ:

Այս տարուայ հանգանակութիւնը նպատակաւորուած էր Լեւոնային Ղարաբաղի Հիմնադրամի վերականգնման ու զարգացման: Այդ շրջանը ներկայիս կը բնակի 12 հազար մարդ:

Առաջին անգամ ըլլալով Հայաստանէն եւ Արցախէն եղած նուիրատուութիւնները գերազանցեցին 1,54 միլիոն տոլարը:

Մեծ նուիրատուներու շարքին էին «Լիմա» Հիմնադրամը (2 միլիոն), «Project CURE» (2 միլիոն), Վահէ Կարապետեան (1,5 միլիոն) ձեռքի Թուրքիանեան (1,25 միլիոն), Ռուսաստանէն Արա Աբրահամեան (1 միլիոն), Լուիզ Սիմոն Մանուկեան (500.000 տոլար), Սարգիս Յակոբեան (250.000 տոլար), Հայաստանէն Տիգրան Մովսիսեան (140.000 տոլար, ՀԲԸՄ «Մանուկեան-Դեմիրճեան դպրոց» (115.000 տոլար), Լեւոն եւ Գրիգոր Տիգրմէնեաններ (110.000 տոլար), Հայաստանէն Միխայիլ Բաղդասարով (100.000 տոլար), Հայաստանէն «ՎիվաՄէլ» ընկերութիւնը (67.000 տոլար), Արկաղի Օվանէսեան (60.000 տոլար), Հայաստանէն Սամուէլ Ալեքսանեան (50.000 տոլար, Հայաստանէն Ռուբէն Հայրապետեան (50.000 տոլար):

Արձանագրուած յաջողութեան մասին խօսելով Տիգր. Մելքոնեան յայտարարեց, «Հեռուստամարաթոնի աննախադէպ յաջողութիւնն այս բացառիկ կազմակերպութեան առաջնութեան նկատմամբ սփիւռքի անասան հաւատի արդիւնքն է: Հիմնադրամը աշխարհասփիւռն հայութեանը մէկ ընդհանուր նպատակի շուրջ է համախմբուած, այն է՝ կառուցել հզօր ու կենսունակ Հայաստան»:

## Ս.Դ.Հ.Կ. ՎԱՐԻՉ ՄԱՐՄՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ Լ.Ղ.Յ.Ի ՆԱԽԱԳԱՅ ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ՀԵՏ



Նախագահ Արկաղի Ղուկասեան (կեդրոնը) շրջապատուած Ս.Դ.Հ.Կ. Վարիչ Մարմնի անդամներով

Անցեալ Չորեքշաբթի երեկոցեան Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի պատուիրակութիւնը հանդիպում մը ունեցաւ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Տիգր. Արկաղի Ղուկասեանի հետ, որ Լոս Անճելէս ժամանած էր մասնակցելու «Հայաստան» Հիմ-

նադրամի հեռուստամարաթոնին: Սոյն հանդիպման իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Ուաշինկթընի մօտ Ղարաբաղի ներկայացուցիչ՝ Վարդան Բարսեղեան:

Հնչակեան պատուիրակութեան անունով Գաբրիէլ Մոլոյեան ող-

## ԿԸ ԿԵՂԾԵՆ ՆԱԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ...

Հայաստանի մէջ այսօրուայ գործող բոլոր մակարդակներու իշխանութիւնները արտադրութիւնն են հակաժողովրդավարական եւ ապօրէն գործընթացներու: Սկսեալ խորհրդարանականէն, անցնելով նախագահական եւ նաեւ սահմանադրական հանրաքուէի քուէարկութիւնները տեղի ունեցան համատարած խախտումներով եւ բացայայտ կեղծիքներով: Նման միջոցներով ձեւաւորուած իշխանութիւնը գուրկ է ժողովրդային նեցուկէ եւ իր համար չենարան ընտրած է երկրի քրէական տարբեր ու կ'ապաւինի անոնց միջոցաւ իրականացուող քաղաքական փոխադրութեան կաշառակերութեան վրայ: Այս բոլորի մասին կը վկայեն միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնները, որոնք իրենց հերթական տեղեկագիրներով, բոլորն ալ կու գան հաստատելու երկրէն ներս տիրող իրավիճակը ու կը դատապարտեն Հայաստանի իշխանութիւններու գործունէութիւնը քաղաքական, ընկերային, տնտեսական, ազատութիւններու եւ այլ մարզերէն ներս:

Իշխանութիւններու ձեռքին գործիք են նաեւ պետական բոլոր լծակները, որոնց առաջին շարքին վրայ կու գայ Հայաստանի Հանրային հեռուստատեսութիւնը, որ դարձած է իշխանական վերնախաւի փառաբանութեան բեմ ու կառավարական «քոլիսիայի» մաս կազմող կուսակցութիւններու խօսափող:

Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Երեւանի «Սարգիս Տիրունի» երիտասարդական միութիւնը վերջերս հանդէս եկաւ յայտարարութեամբ մը, դատապարտելով հեռատեսիլի առաջին ալիքը՝ պատմութիւնը խեղաթիւրելու եւ սփիւռքի մասին միակողմանի եւ իրականութեան չհամապատասխանող տեղեկութիւններ ներկայացնելու համար:

Սոյն հեռատեսիլի ալիքը, որ արբանեակով կը սփռուի նաեւ աշխարհի տարբեր կողմերու հայութեան, առիթներով կը կրկնէ թէ, արտասահմանի մէջ «Հայաստան» Հիմնադրամի աշխատանքները կը գլխաւորէ Դաշնակցութիւնը: Իսկ վերջերս ներկայացուցած է Հայ ազատագրական պայքարի մասին հաղորդումը մը, որ պատմականը կ'ընէ 19-րդ դարու վերջաւորութեան եւ 20-րդ դարու սկզբնաւորութեան թրքական լուծի դէմ Հայ ժողովուրդի մղած ազգային ազատագրական պայքարին: Յայտագիրը լայնօրէն անդրադարձած է Դաշնակցութեան այդ ժամանակուայ գործունէութեան ու դերին, առանց սակայն մէկ բառ իսկ արտայայտուելու այլ կուսակցութիւններու եւ յատկապէս Հնչակեան կուսակցութեան ունեցած կարեւոր դերակատարու-

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԸ ՉԵՆ ՖԻՆԱՆՍԱԿՈՐԻ ՆԱԽՈՆՏՐԱԿԱՆ ԱՐՇԱԻՐ

Ամերիկացիները այս անգամ հաստատ որոշել են՝ չֆինանսավորել Հայաստանի իշխանութեան նախընտրական արշավը, որն արդեն իսկ սկսել է: Դրա մասին է վկայում Հազարամեակի մարտահրավեր ծրագրի խիստ դանդաղ ընթացքը: Եթէ 2003 թուականի ընտրութեան համար Նահանգները տուեցին աւանս, որը Հայաստանի իշխանութիւնը այդպէս էլ չարդարացրեց, ապա այս անգամ որոշել են չխառնուել գործին, չամենայն դէպս փողով: Պատճառը կարող է լինել նաեւ այն, որ ԱՄՆ տեսաւ՝ ինչքան էլ ուզում են փող տուր Հայաստանի իշխանութեանը եւ նա էլ ինչքան ուզում է թող ստֆալտ անի ու ջրագիծ բացի, միեւնոյն է, չի ընտրուելու: Ամերիկացիները տեսան, որ դա ընդամենը աւելորդ փողի ծախս է, որը ոչ միայն օգուտ չի բերում, այլ նոյնիսկ վնասում է իրենց: Նրանք փող են տալիս Հայաստանի իշխանութեանը, իշխանութիւնը նոյնիսկ դրանով չի կարողանում իր համար քիչ թէ շատ վատահոլութիւն ու համակրանք ապահովել հանրութեան շրջանում, ինչի հետեւանքով էլ ԱՄՆ կանգնում է կամ յեղափոխութիւն ֆինանսավորելու, կամ նուազ ծախսերի գնով իշխանութեան վերարտադրութիւնը հանդուրժելու ընտրութեան առաջ: Մինչ այս, կատարուել է «հանդուրժողութեան» ընտրութիւն, թերեւս երկու ծախս չանելու համար: Իսկ այդ պարագայում Հայաստանում թուլանում է ԱՄՆ հանդէպ հասարակական վստահութիւնը, քանի որ մարդիկ տեսնում են, թէ ինչպէս է ժողովրդավարութեան ջատագով եւ դրօշակակիր համարուող երկիրն ընդունում ժողովրդավարութեան հետ որեւէ առնչութիւն չունեցող ընտրութեան արդիւնքը, կամ յամենայն դէպս աչք փակում դրա վրայ: Դրանից բացի, մի քանի միլիոն ծախսէս, որ իշխանութիւնը մնայ, յետոյ էլ մի քանի միլիոն ծախսէս, որ հեռանայ: Անտրամաբանական է ու անհաշուենկատ: Այժմ պատկերն այլ է: Ամերիկացիները որոշել են իշխանութեան մնալու համար փող

չծախսել: Դա անշուշտ չի նշանակում, որ նրանք որոշել են փոխ ծախսել հեռանալու համար: Բայց ամէն դէպքում ակնյայտ է, որ երկու ծախսից նրանք այս անգամ էլ խուսափում են՝ հետեւութիւնը բնականաբար թողնելով իշխանութեանը: Իսկ ծախսերից խուսափելու մասին է խօսում Հազարամեակի մարտահրավերի եւ Լինսիի երկրորդ ծրագրի աշխատանքի ընթացքը: Թէ մէկ եւ թէ միւս ծրագրով փողերն ուշանում են, անդառնալիորէն ուշանում են: Հայաստանի ֆինանսների նախարարը մի քանի ամիս առաջ, երբ նոր էր ստորագրուել Հազարամեակի մարտահրավերի համաձայնագիրը եւ դեռ կոնդիլիգա Ռայսի հետ 15 րոպէ նոյն սենեակում գտնուելու տպաւորութեան տակ էր, յայտարարում էր, որ Հայաստանն ակնկալ Հազարամեակի հնգամեայ ծրագրի 235 միլիոն դոլարից 6 միլիոնը: Մի քանի շաբաթ առաջ ֆինանսների նախարարն արդէն յոյս էր յայտնում, որ մինչեւ տարեվերջ Հայաստանը 2 միլիոն կը ստանայ: Իսկ վարչապետն էլ մի քանի օր առաջ ասել էր, թէ շուտով կը ստանանք այդ ծրագրի առաջին մասը՝ 1,5 միլիոն: Տարեվերջին մնացել է ընդամենը 40 օր, իսկ փողը դեռ չկայ: Եւ ամենայն հաւանականութեամբ չի էլ լինի մինչեւ գարուն: Այդ փողը պէտք է ծախսուի գիւղական ճանապարհների ասֆալտապատման, ջրագծերի անցկացման եւ այլ ենթակառուցուածքների նորոգման ու կառուցման համար: Այսինքն այդ աշխատանքի համար անհրաժեշտ է բարենպաստ եղանակ: Իսկ եղանակը Հայաստանում բարենպաստ է սկսած Ապրիլից: Իսկ Ապրիլը 2007 թուականին խիստ նախընտրական է լինելու, եւ ամերիկացիները թերեւս պատկերացնում են, որ Հազարամեակների փողով այդ շրջանում առաւել յաջողութիւն կը բաժանուի, ոչ աւելի:

**ՅԱԿՈՒ ԲԱԴԱԼԵԱՆ**  
«ԼՐԱԳԻՐ»

ՈՐ ՄԵՆՔ ԶԵՐՈՍ

Եւ այսպէս, առաջիկայում սպասուում է Ալիեւ-Քոչարեան հերթական (կարելի է 100 տոկոսով կանխատեսել՝ անպտուղ) հանդիպումը: Կարծես թէ յայտնի են այդ հանդիպման վայրը եւ ժամանակը՝ Մինսկ, 28 Նոյեմբերի: Յայտնի է նաեւ բանակցութիւնների ներկայացուած փաստաթղթի նախագիծը, որի տարրերն արդէն ոչ մէկի համար զաղտնիք չեն. 7 շրջաններից հայկական գործերի դուրսբերում, փախստականների վերադարձ, ապաշրջափակում, հանրաքուէ: Շանսերը, որ այդ տարրերի շուրջ երկու երկրների նախագահները կը գան համաձայնութեան, հաւասար են գրոյցի: Այդ հանդիպումից յետոյ Մինսկի խմբի համանախագահները վերջնականապէս եւ, կարելի է ասել՝ «պաշտօնապէս» կը յայտարարեն «2006-ի հնարաւորութիւնների պատուհանի» փակման մասին: Դա իսկապէս կը լինի վերջին հանդիպումը ոչ միայն այս տարում, այլեւ մօտակայ 2 տարուայ կտրուածքով, քանի որ Հայաստանում եւ Ատրպէյճանում սպասուելիք ընտրութիւնների ժամանակ կողմերից ոչ մէկը տրամադրուած չի լինի նոյնիսկ ձեւ անել, թէ բանակցում է, ինչպէս դա անում են հիմա:

Բանն այն է, որ երկու երկրներում չի գտնուի քաղաքական գործիչ (իշխանամէտ, թէ ընդդիմադիր ճամբարից), որը Հայաստանում կասի, թէ որոշակի պայմաններով 7 շրջան վերադարձնելը ընդունելի է, կամ Ատրպէյճանում

րի մի մասն էլ իրականանում է, ապա դա ոչ թէ կանխատեսման, այլ տեղեկացուածութեան հետեւանք է: Գալուստին ասում են՝ ինքն էլ կրկնում է: Դա է իր գործը: Եթէ ՀՀԿ խմբակցութեան ղեկավարը իրօք լաւ վերլուծաբան լինէր, ապա կը հասկանար, որ Աջափնեակում ինչ է սպասուելու, ու որդուն խորհուրդ չէր տա դուրս գալ քաղաքապետարանից: Փաստօրէն Գալուստը մի անգամ ինքնուրոյն քայլ արեց ու «պռաւալի» ենթարկուեց: Այնպէս որ, լրագրողներս պէտք է զգոյշ լինենք գնահատականներում ու Գալուստից Նոստրադամուս չսարքենք: Մարդը հագիւ իր երթուղային գծերից է գլուխ հանում, իսկ մենք գոռով ասում ենք՝ վերլուծութիւններ արա: Յետոյ ինչ, որ իշխանութեան մտաւոր մակարդակն այնքան է ընկել, որ բացի Գալուստ Սահակեանից, էլ ոչ ոք ելոյթ ունենալ չի կարող:

Վերադառնալով ՀՀԿ-ի կեդի-քային նոր տեխնոլոգիաներին՝ նկատենք, որ դրա փորձարկումն արդեն մի քանի անգամ եղել է: Երեւանի Աւան համալսարանում թաղապետի թեկնածու առաջադրուած վարչապետ Անդրանիկ Մարգարեանի որդի Տարօնը առանց մրցակիցների դարձաւ թաղապետ մի թաղամասում, ուր իր հայրը ժամանակին չէր կարողացել նոյնիսկ աւագանու անդամ ընտրուել:

Մէկ թեկնածուի սկզբունքով ՀՀԿ-ականները մի շարք այլ տեղերում նոյնպէս համայնքապետեր են դարձել: Վերջերս Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ «ընտրուեց» նորաթուխ հանրապետական Ռուբէն Հայրապետեանը: Նա նոյնպէս առաջադրուած միակ թեկնածուն էր:

**Վ.Ս.**  
«ԻՐԱԽՈՒՆՔ»  
Կրճատուած

կը յայտարարի, որ Ղարաբաղի կարգավիճակը որոշող՝ ԼՂՀ-ում անցկացուելիք հանրաքուէն հնարաւոր է: Թերեւս Հայաստանում միակ բացառութիւնն էր Լեւոն Տէր-Պետրոսեանը, բայց նա (արդէն առիթ եմ ունեցել ասելու) դասական իմաստով քաղաքական գործիչ չէ: Նա յեղափոխական ալիքով քաղաքականութիւն եկած մտաւորական է, հետեւաբար՝ երկրի ամենաբարձր պաշտօնում գտնուելիս իրեն պարտաւորուած չէր զգում ստել, ձեւեր թափել եւ ամբոխահաճոյ ճառեր արտասանել: Հիմա ո՞վ կը համարձակուի ասել, որ կարգաւորման առաջարկուող տարբերակը «ընտրութիւն է վատի եւ վատթարի միջեւ»:

«Դասական» քաղաքական գործիչը սովորաբար գնում է նուազագոյն դիմադրութեան ճանապարհով եւ խաղում է ամբոխի բնագոյնների վրայ՝ «ոչ մի թիզ հող թշնամուն»: Նա երբեք առիթը բաց չի թողնի ցոյց տալու, որ ինքը, դրսեւորելով կոշտ, անզիջում դիրքորոշում, հերոսաբար մարտնչում է յանուն ազգի, իսկ հա իր ընդդիմախօսը պաշտպանում է հակառակորդի շահերը, անարգում է ռազմի դաշտում թափուած արիւնը, ազգադաւ է եւ թշնամի: Մի խօսքով, քաղաքական գործիչները սովորաբար վարում են այնպէս, ինչպէս Թուրքիայից Եգիպտոս եկած «յեղափոխականը» Երուսաղէմ Օտեանի յայտնի պատմուածքում: Այդ մոտիվներն, անշուշտ, շահարկուելու են Հայաստանում եւ Ատրպէյճանում նախընտրական կամպանիաների ժամանակ, եւ այդ պայմաններում նոյնիսկ ձեւ անել, թէ բանակցում են, նշանակում է հարուածի տակ դնել ամբողջ իշխանական թիմը: Ոչ մի նախագահ նման ռիսկի չի գնա:

**ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ**  
«ԱՌԱԽՕՏ»

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԿԱՍ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԵՐՋԻՆ ԱՇՈՒՆԸ

Իշխանութիւնները գլխապատու մխրճուել են նախընտրական արշաւի մէջ: Գաղափարական ոչ մի բան չկայ: Միայն՝ ընտրակաշառք: Արդէն սկսուել են ընտրակեղծիքները, քանի որ հեռուստատեսութեւրը գաւթուած է ՀՀԿ-ի եւ այլ իշխանամէտների կողմից: Ընդդիմութիւնը մեծ հաշուով գրկուած է եթերից: Վազգէն Մանուկեանի ու Բաֆֆի Յովհաննիսեանի նախաձեռնած քաղաքացիական շարժումը, օրինակ, շատ հպանցիկ լուսաբանուեց, իսկ Սերժիկ Սարգսեանի «կամուֆլյաժային» ջղաձիգ ելոյթը օրերով պտտեցուած էր տարբեր ալիքներով: Դատելով պաշտպանութեան նախարարի ռեակցիայից՝ Վիկտոր Դալլաբեանը ճիշդ նշանակէտին էր խփել: Իշխանութիւնները շատ լաւ հասկանում են, որ չարժէ յոյս դնել հասարակական աջակցութեան վրայ, այդ իսկ պատճառով փորձ է արուելու կեղծիքների տեխնոլոգիան գարգացնել եւ քայքայել ընդդիմադիր դաշտը: Ընտրակեղծիքների նոր տեխ-

նոլոգիան ՀՀԿ-ի կողմից արդէն կիրառուել է: Նորոյթն այն է, որ իշխանական թեկնածուն այլընտրանք չի ունենում: Աժ ընտրութիւններում յոյսը մեծամասնական տեղերի վրայ դրած ՀՀԿ-ին անհրաժեշտ են անայլընտրանք ընտրութիւններ: Այդ դէպքում կամ մէկ թեկնածու է առաջադրուում տուեալ

**Մէկ թեկնածուի սկզբունքով  
ՀՀԿ-ականները մի շարք այլ  
տեղերում միայնպէս  
համայնքապետեր են դարձել**

ընտրատարածքում, կամ էլ ձեւական մրցակցութիւն է ստեղծուում: Պատահական չէ, որ Գալուստ Սահակեանը իրէպական է համարում Աջափնեակի ընտրութիւնների տարբերակը: Ոչինչ որ այդ համայնքում Գալուստի որդուն չթողեցին առաջ գրողուել: Ի դէպ, մամուլի թեթեւ ձեռքով լաւ կանխատեսող համբաւ ձեռք բերած Գալուստը իրականում բացարձակապէս «զերօ» է կանխատեսումներին, իսկ եթէ իր ասածնե-

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹ-ԱՌԵՐԹ**  
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
ԽՄԲԱԳԻՐ  
SOPEA ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝  
ՍԱՅԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ  
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ  
Շեռ. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797- 6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party of  
Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104







**ԼՈՒՐԵՐ**

**ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՀԱՍՏԱՏԵՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՕՏԱՐՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԻՃԱՅԱՐՈՅՑ ՕՐԻՆԱԳԻԾԸ**

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»։ Երկուշաբթի, Նոյեմբեր 27-ին Հայաստանի Ազգային ժողովը արտահերթ նիստում երրորդ և վերջնական ընթերցմամբ հաստատեց «Հասարակութեան և պետութեան կարիքների համար սեփականությունն օտարման մասին» օրինքի նախագիծը:



Ցուցարարները Խորհրդարանի շենքի մոտ

Քուէարկութեանը չմասնակցեցին «Ազգային Միաբանություն», «Արդարություն» և «Օրինաց Երկիր» խմբակցությունները, անկախ պատգամաւորներից ոմանք:

Ձեռնպահ քուէարկեցին Դաշնակցություն երկու գործարար պատգամաւորներ:

«Սա Սահմանադրությունը հակասող օրէնք է», - քուէարկութեանից առաջ պատգամաւորներին ասաց «Արդարություն» խմբակցութեան քարտուղար Գրիգոր Յարութիւնեանը՝ կոչ անելով չմասնակցել քուէարկութեանը:

Խորհրդարանի շէնքի մօտ հաւաքուած էին սեփականութեան օտարումից տուժած քաղաքացիները, ովքեր նիստի գնացող իշխանամէտ

պատգամաւորներին դիմաւորում է «Ամօթ» բացականչութիւններով, իսկ ընդդիմադիր Ալիսարգիս օրինագծին դէմ արտայայտուած պատգամաւորներին՝ ողջունելով ու յոյս յայտնելով. - «Մենք ձեր գործին ենք սպասում»:

Այդուհանդերձ, Ազգային ժողովը 70 կողմ ձայնով երրորդ և վերջնական ընթերցմամբ հաստատեց օրինագիծը:

**ՊԱՔՈՒՆ ԶԱՆՔԵՐ Է ԳՈՐԾԱԴՐՈՒՄ ՌԱՍԻԼ ՍԱՖԱՐՈՎԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԱՏՐՊԵՅՃԱՆ**

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»։ Ատրպէյճանի արդարադատութեան նախարարութիւնը դիմել է Հունգարիայի արդարադատութեան նախարարութեանը՝ հայ սպայ Գուրգէն Մարգարեանին կացնահարած Ռամիլ Սաֆարովին հայրենիք վերադարձնելու խնդրանքով:

Ատրպէյճանի արդարադատութեան նախարարութեան միջազգային համագործակցութեան վարչութեան պետ Զաւեր Գաֆարովի վկայութեամբ՝ երկու երկրներն էլ միացել են «Պատիժը կրելու նպատակով կաշնակողներին փոխանցելու մասին» 1983 թուականի Եւրոպական կոնվենցիային:

«Հունգարիայում ես հանդիպել եմ Ռամիլ Սաֆարովի հետ: Նա ինձ դիմում է փոխանցել պատիժը կրելու նպատակով հայրենիք տեղափոխելու խնդրանքով: Այդ հարցը կարող է քննարկուել դատավճիռ

ու օրինական ուժի մէջ մտնելուց յետոյ», - փաստել է Գաֆարովը: Նրա վկայութեամբ՝ վճռաբեկ գանգատի քննարկումը դատարանում նախատեսուած է Ապրիլին: Գաֆարովը յայտնել է, որ դատավճիռն ուժի մէջ մտնելուց յետոյ բանակցութիւնները Հունգարիայի արդարադատութեան նախարարութեան հետ կը շարունակուեն, հաղորդում է Day.az գործակալութիւնը:

Ռամիլ Սաֆարովը 2004 թուականի Փետրուարի 19-ին կացնահարել էր լեյտենանտ Գուրգէն Մարգարեանին: Նրանք մասնակցում էին Հունգարիայի ռազմական ակադեմիայում ՆԱՏՕ-ի կողմից կազմակերպուած անգլերէն լեզուի դասընթացներին:

2006 թուականի Ապրիլին Հունգարիայի դատարանը Սաֆարովին դատապարտեց ցմահ ազատազրկման:

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԳՐԵԹԷ ՄԵԿ ԵՐՐՈՐԴԸ ԱՇԽԱՏՈՒՄ Է ՌՈՒՄԱՍՏԱՆՈՒՄ»**

Մոսկուայում լոյս տեսնող «Վերսիա» պարբերականը պնդում է, որ Հայաստանի բնակչութեան մօտ մէկ երրորդը փող է վաստակում Ռուսաստանում:

«Այսօր, ըստ ոչ պաշտօնական վիճակագրութեան, Ռուսաստանում փող է վաստակում Տաջիկստանի բնակչութեան 20 տոկոսը, Հայաստանի բնակչութեան 30 տոկոսը և Մոլդովայի բնակչութեան գրեթէ 40 տոկոսը», - պնդում է թերթը:

Ընդհանուր առմամբ, պարբերականի վկայութեամբ, ներկայումս Ռուսաստանում աշխատում է 8-10 միլիոն օտարերկրեայ քաղաքացի:

**ԲԺԻՇԿ-ՍՊԱՆԵՐԻՆ ՏԱՆՈՒՄ ԵՆ ԲԱՆԱԿ**

Ռոբերդ Քոչարեանը Նոյեմբերի 23-ին հրամանագիր է ստորագրել ՀՀ զինուած ուժերի պահեստագործի առաջին խմբի բժշկական կազմի սպաների զօրակոչ անցկացնելու եւ զօրացրում կատարելու մասին: Հրամանագրի համաձայն, 2006 թուականի Նոյեմբեր-Դեկտեմբեր ամիսներին կ'անցկացուի ՀՀ զինուած ուժերի պահեստագործի առաջին խմբի բժշկական կազմի՝ մինչեւ 35 տարեկան սպաների զօրակոչ՝ ծառայութեան ժամկէտը սահմանելով երկու տարի: 2006 թուականի Դեկտեմբերին կը զօրացրուեն սահմանուած ժամկէտում գինուած ուժերում պարտադիր զինուորական ծառայութիւն անցած բժշկական կազմի սպաները:

**ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ. «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՆԱԿՉՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԵՏ ՆՈՐՄԱԼ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ ՉԷ»**

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»։ «Թուրքիայի կողմից Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը նորմալ, բարիդրացիական յարաբերութիւնների նախապայման է Հայաստանի համար», - յայտարարել է Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանեանը «Ֆրանսպրես» գործակալութեան հարցազրոյցում: Նա համոզուած է յայտնել, որ «այդ արգելքը կարող է վերացուել թուրք եւ հայ ժողովուրդների՝ որպէս հարեւան ժողովուրդների գործակցութեամբ»:

Ռոբերդ Քոչարեանի Կիպրոս կատարած պետական այցի ընթացքում տուած հարցազրոյցում Հայաստանի արտգործնախարարը «Ժխածած կոյթ» է որակել 1915-17 թուականների իրադարձութիւնները ուսումնասիրելու համար պատմաբանների համատեղ յանձնաժողով ստեղծելու՝ Թուրքիայի վարչապետ Ռեջէփ Էրդողանի առաջարկը. - «Ինչպէ՞ս կարող է ստեղծուել համատեղ յանձնաժողով՝ առանց Անկարայի եւ Երեւանի միջեւ դիւանագիտական յարաբերութիւնների»:

«Դա քաղաքական հարց է, եւ այդ հարցին պէտք է մօտենալ քաղաքական տեսանկիւնից», - շեշտել է Վարդան Օսկանեանը:

Հայաստանի արտգործնախարարը քննադատել է Թուրքիային պետականօրէն ուրացման քաղաքականութիւն վարելու համար, ընդ որում՝ «որքան աւելի շատ երկրներ են ճանաչում (Հայոց Ցեղասպանութիւնը), այնքան աւելի ազդեակ է դառնում Թուրքիան ուրացման իր քաղաքականութեան մէջ»:

«Թուրքերը դեռ երբեք պետական մակարդակով այսքան կազմակերպուած չեն եղել ուրացման քաղաքականութիւն վարելու հարցում», - ընդգծել է Օսկանեանը:

Հայաստանի արտգործնախարարի համոզմամբ, Հայոց Ցեղասպանութեան ուրացման համար քրէ-

ական պատասխանատուութիւն սահմանող օրինագծի ընդունումը Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից «յստակ արձագանք էր թուրքական կառավարութեան ազդեակի ուրացողական քաղաքականութեանը»:

Անդրադառնալով մտապահութիւններին, թէ ճանաչումը կարող է հանգեցնել փոխհատուցման պահանջների, Օսկանեանը շեշտել է. - «Հայաստանը այսօր իր արտաքին քաղաքականութեան օրակարգում ունի միայն Ցեղասպանութեան ճանաչման հարցը»:

Նա նաեւ ընդունել է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը լուրջ խոչընդոտ է Թուրքիայի հետ յարաբերութիւնների համար, եւ ընդգծել, որ «Ատրպէյճանի հետ Անկարայի աներկբայ համերաշխութիւնը գործում է Թուրքիայի դէմ, քանի որ վստահութիւնը եւ կշիռը, Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ կամուրջ լինելու նրա հաւակութիւնները»:

Վարդան Օսկանեանն անընդունելի է համարել զուգահեռը Լեռնային Ղարաբաղի եւ Հիւսիսային Կիպրոսի միջեւ՝ շեշտելով, որ առաջինն ի յայտ է եկել Խորհրդային Միութեան փլուզման արդիւնքում, իսկ երկրորդը՝ ՄԱԿ-ի անդամ պետութեան տարածքում:

Համաձայնելով հանդերձ, որ Կիպրոսը եւ Հայաստանը խոչընդոտներ տեսնում են Եւրամիութեանը Թուրքիայի անդամակցութեան ճանապարհին, Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարը միաժամանակ հերքել է, թէ երկու երկրներն աշխատում են Թուրքիայի դէմ:

«Մեր այցի նպատակը անտեսական կապերի աշխուժացումն է», - յայտարարել է Վարդան Օսկանեանը: - «Մենք իրօք ունենք ընդհանուր հարցեր, որոնք քննարկել ենք, բայց մենք չենք միաբանուել այլոց դէմ»:

**ԿԸ ԿԵՂԾԵՆ ՆԱԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ...**

Շաբաթնակաւուած էջ 1-էն թեան:

Թրքական լուծի դէմ ազգային ազատագրական պայքարի ազդանշանը տուած է Հնչակեան կուսակցութիւնը: Գուժ Գափուրի եւ Պապ Ալիի ցոյցերէն մինչեւ Սասնոյ եւ Զէյթունի նպատամբութիւնները եւ բազմաթիւ ինքնապաշտպանական մարտեր կազմակերպուած են ու մղուած Հնչակեան կուսակցութեան առաջնորդութեամբ: Պատմութեան էջերը լեցուն են Հնչակեան մարտիկներու սիրագործութիւններով եւ անձնագոհութեան դրուագներով: Կարելի է ժամանակուայ պատմութեան մասին խօսիլ առանց անդրադառնալու Հնչակեան կուսակցութեան գործունէութեան ու ունեցած հիմնական դերի մասին: Պետական պիւտճէի միջոցներով ֆինանսաւորուող Հանրային Հեռուստատեսութիւնը սկզբունքով պէտք է ծառայէ միմիայն իրականութեան եւ հեռու մնայ կուսակցական քարոզչութեան: Սակայն, ինչպէս ամէն ինչ, Հայաստանի մէջ այսօր խախտուած է նաեւ այդ սկզբունքը:

Հայաստանի առաջին ալիքի կողմէ նման հաղորդումներու նպատակը եթէ նախընտրական շրջանին, յօգուտ կուսակցութեան մը հանրային կարծիք պատրաստելն է, ապա ան դատապարտուած է ճախողութեան: Ժողովուրդը կ'ակնկալէ լսել, թէ այսօր ինչ կու տայ իրեն գործող իշխանութիւնը անտեսական եւ ընկերային գետնի վրայ, որպէսզի ան կարողանայ մարդկային արժանապատիւ կեանք մը ապահովել: Այս իմաստով, դրական ոչինչ չունենալով ներկայացնելու, կը դիմուի պատմական իրողութիւնները խեղաթիւրելու եւ արտասահմանեան իրադարձութիւններու մասին բոլորովին սխալ տեղեկութիւններ ներկայացնելու անպարկեշտ միջոցին:

Մենք նպատակ չունինք թերագնահատելու որեւէ կազմակերպութեան ներդրումը մեր ազգային կեանքին ներս, սակայն չենք կրնար ընդունիլ, որ կեղծիքներու վրայ կառուցուած Հայաստանի ներկայ իշխանութիւնը հասնի այնպիսի մակարդակի, որ իր ձեռքերուն մէջ եղող զանգուածային լրատուական միջոցները օգտագործէ՝ կեղծելու համար նաեւ մեր ժողովուրդի մօտաւոր անցեալի պատմութիւնը:

Ս.Դ.Յ.Կ. ՄԱՍԼՈՅ ԴԻՒԱՆ



ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՅՐԱՆԴ ԲԱԳՐԱՏԵԱՆԻ ՅԵՏ

«ԼՂ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՊԵՏՔ Է ԿԱՐԳԱԻՈՐԻ ՂԱՐԱԲԱՂԻ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ»

«ԼՂ ՀԱՐՑՈՒՄ 4-5 ՏԱՐԻ ՅԵՏՈՅ ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԲԱԽՈՒԵԼ ՊԱՏԵՐԱԶՄԻ»

«2006թ-ին ԼՂ հիմնախնդիր-րը չի կարգաւորուել», - աւելի քան վատահ է նախկին վարչապետ, «Ազատութիւն» կուսակցութեան նախագահ Հրանդ Բագրատեանը: Իր կառավարութեան օրօք ԼՂ պատերազմում չաղթանակ արձանագրած նախկին վարչապետը պատասխանելով՝ մեր հարցերին, վստահեցրեց, որ անկախ առկայ իրավիճակից ԼՂ հիմնախնդիրը կարգաւորելու համար դեռեւս կան հնարաւորութիւններ:

Ըստ նրա, այս պահին մենք պէտք է եռանդուն եւ ազդեցիկ քաղաքականութիւն վարենք, որը կը ստիպի Ատրպէյճանին գնալ որոշակի փոփոխումներ:

Ըստ Ձեզ, ե՞րբ կողմերը համաձայնութեան կը գան եւ հաշտութիւն կը կնքեն:

«ԼՂ հիմնախնդրի կարգաւորումը փաստաթղթով չի պայմանաւորուած: Կարող են 1000 պայմանագիր կնքել եւ 1000-ն էլ խախտել: Ոչ մի երաշխիք չկայ, որ փաստաթուղթ ստորագրելուց մէկ օր յետոյ չեն վերսկսուի ռազմական գործողութիւնները: ԼՂ հիմնախնդրի լուծման համար իրական գործօժաններն են անհրաժեշտ: Եթէ նոյնիսկ այդ փաստաթուղթը 1997-98-ին կամ Քի վետոյով ստորագրուէր, ապա այն հնարաւոր էր լինի կեանքի կոչել:

Ես այդպէս չեմ տեսնում ԼՂ հիմնախնդրի կարգաւորումը: Ինձ միշտ դարձաբեր է, թէ մինչ օրս Ատրպէյճանն ինչու չի համաձայնուում որեւէ փաստաթուղթ ստորագրել: Բոլոր տարբերակների դէպքում էլ Ատրպէյճանն ինչ-որ բան ստանում է: Եւ ինչո՞ւ Ատրպէյճանը չի ստորագրում որեւէ փաստաթուղթ:

«Մենք անընդհատ սխալմամբ ասում ենք, որ Ատրպէյճանցիները լաւ դիւանագէտներ են, սակայն սխալում ենք: Ատրպէյճանցիները շատ պարզունակ են եւ էմոցիոնալ: Այսինքն, Դուք հաւատում էք ԳԳ իշխանութիւնների այն յայտարարութիւններին, թէ ԼՂ հիմնախնդիրը չի կարգաւորուում, քանի որ Ատրպէյճանցիները չունեն համապատասխան ցանկութիւն:

«Այո, ես հաւատում եմ նրանց: Ինչո՞ւ Ալիեւը դառնում է տարածաշրջանի ամենաազդեցիկ քաղաքական գործիչը եւ ԼՂ հիմնախնդիրը ցանկանում է լուծել՝ առանց Ռուսաստանին եւ Արեւմուտքին լուծող գիշումներ անելու: Ինչո՞ւ Ալիեւին ոչինչ էր խանգարում Սահակաշվիլուց մէկ օր առաջ յայտարարել իր ՆԱՏՕ մտնելու մասին:

«Ի՞նչու է հետ պահում Իլիամ Ալիեւը:

«Իշխանութիւնը: Պարզապէս նա տիրապետում է նաւթի եւ ուզում է տարածաշրջանում դառնալ երկրորդ Քուէյթ: Վերջին հետազոտութիւններն էլ ցոյց են տուել, որ Ատրպէյճանում հսկայական գազի պաշարներ կան: Երկրորդ հանգամանքը, որ Ատրպէյճանցիներին հետ է պահում ԼՂ հիմնախնդիրը կարգաւորելու գործընթացում՝ դա նրանց զգացմունքնային լինելն է: Ինչ կա Ատրպէյճանցիներին գլխում, այն էլ՝ լեզուին է, եւ ցանկացած փաստաթուղթ ինչպէս Ատրպէյճանի ընդդիմութեան, այնպէս էլ իշխանութեան ներսի ընդդիմութեան կողմից ընկալում է իբրեւ դաւաճանութիւն: Եթէ Հէյտար Ալիեւը ժամանակին այդքան էմոցիոնալ եւ ռոմանտիկ չլինէր, ապա վաղուց ինդիքը կարգաւորուած կը լինէր: Մեր իշխանութիւնների յայտարարութիւնները վկայում են, որ իրենց բախտը բերում է, որ Ատրպէյճանցիները դէմ են փաստաթուղթ ստորագրելուն: Իսկ ի՞նչ են անելու, եթէ Ատրպէյճանն այլեւս դէմ չլինի:

«Եւ ի՞նչ եմ անելու:

«Դժուարանում եմ պատկերացնել: Ատրպէյճանն այսօր իսկապէս շահագրգիռ է ԼՂ հիմնախնդիրը կարգաւորելու հարցում, որովհետեւ հայերը չեն բնակեցնում տարածքները, չեն ստեղծում նոր գործօժաններ: Այսօր իսկապէս եւ քրիստոնեայ աշխարհների բախում է տեղի ունենում, եւ քրիստոնեաներն այնքան համախմբուած չեն, որքան մուսուլմանները: Այսօր քրիստոնեաների շահերի մէջ չի մտնում այս տարածաշրջանում հայերի ինդիքի լուծուելը: Արեւմուտքն այսօր ուզում է, որ իսլամական աշխարհի ռազմաթիւնները լուծուեն Ռուսաստանի հաշուին: Այս համատեքստում Ռուսաստանը լուծումներ է փնտրում, որ իսլամական աշխարհին գիշումները չլինեն իր հաշուին: Ուրեմն պէտք է այնքան ճկուն լինել, որպէսզի բացառուի առաջին աշխարհամարտի մղձաւանջը: ԼՂ հիմնախնդրի կարգաւորումը յետաձգելով՝ Ատրպէյճանը հզորանում է: Արդեն խօսում են 400 ԱՄՆ դոլար միջին աշխատավարձի մասին: Գնալով այդ երկրի հետ դժուար է լինելու խօսել: Մանաւանդ, որ Հայաստանը զրգուել է նաեւ Թուրքիային: Մենք այնքան անխելք են, որ թոյլ չենք տալիս Թուրքիան գնալ Մ: Ստիպում ենք, որ նա գա Արեւելք, մեզ վրայ: Մեր արածը ոչ այլ ինչ է, քան յիմարու-

թիւն: Եթէ Թուրքիան գնա Մ, մենք նրանից շուտ կը դառնանք Մ-ի անդամ:

Մենք կարող էինք բնակեցնել այդ տարածքները: Մի առիթով Սերժ Սարգսեանը նշել է, որ դա մեծ ֆինանսների հետ է կապուած, որոնք բացակայում են:

1995-96 թթ-ին, ամենաձանր տարիներին այդ տարածքներում 2 անգամ աւելի մարդ է բնակուել, քան այսօր: Վերջին 8 տարիների ընթացքում վիճելի տարածքներում բնակչութիւնը 2 անգամ պակասել է: Ի՞նչու է պատճառը:

«Պատճառն այն է, որ այսօրուայ իշխանութիւններին դա շատ չի հետաքրքրում: Պատճառն այն է, որ ամէն մի հողակտոր մի հատ լորդ կամ գնեւերալ վերցրել եւ ինչ ուզես՝ անում է: Պատճառն այն է, որ եւրոպական երկրներում մենք ցոյցեր ենք անում, հայ դատից ենք խօսում, փոխարէնը՝ գնանք ապրենք այդ տարածքներում: Պէտք է ընդունել, որ մենք նպատակաւորուած քաղաքականութիւն չենք վարում վիճելի տարածքների հարցում: Իսկ Ատրպէյճանից 400 հազ. հայ փախստականները դեգերում են աշխարհում տեղ չգտնելով:

«Ըստ Ձեզ, ԼՂ հարցում հնարաւոր է գտնել մի լուծում, որը բաւարարի բոլոր կողմերին:

«Վերջին հաշուով, այո: Հնարաւոր է ստեղծել Ղարաբաղի անկախ պետութիւն: Չի բացառում, որ Ատրպէյճանը ցանկանայ անկախ Ղարաբաղում ունենալ 15-20 ատրպէյճանական համայնքներ, եւ այդ պետութիւնն իր հերթին կունֆեդերացիոն լինի:

«1998 թ-ին Գերկայիս իշխանութիւնները նախորդներին մեղադրում էին, որ նրանք պատրաստ են տարածքները յանձնել՝ առանց ԼՂ կարգաւորման յստակեցնելու: Ինչպէ՞ս էք գնահատում ԼՂ հիմնախնդրի կարգաւորմանն ուղղուած Գերկայիս իշխանութիւնների քաղաքականութիւնը:

«Այսօրուայ իշխանութիւնները ԼՂ կարգաւորման հարց չեն լուծում: Իսկ ո՞վ ասաց, որ նախկինները չէին լուծում այդ հարցը, որտե՞ղ է գրուած: Այն ժամանակ դեռ երկու հայկական կողմ կար, Ղարաբաղը բանակցութիւնների անմիջական մասնակից էր: ԼՂ հիմ-



նախնդրում 1998 թ-ից մինչ օրս որեւէ առաջընթաց չի արձանագրուել: Միայն աւելացել է նորից հանրաքուէ անցկացնելու գաղափարը, սակայն դրա հետեւում մի մեծ վտանգ կա՝ պարզ չէ, թէ ինչ ձեւաչափով է անցկացնելու այդ հանրաքուէն: Այդ հանրաքուէն հայկական կողմը ներկայացնում է իբրեւ մեր յաջողութիւն, իսկ Ատրպէյճանը՝ իբրեւ իր:

«Դուք հաւատո՞ւմ էք բաց պատուհանի մասին միջնորդների յայտարարութեանը: Սօտ ապագայում հնարաւոր համարո՞ւմ էք խնդրի կարգաւորումը:

«Դրանք հեքիաթներ են: Ինչու՞:

«Գրեթէ վստահ եմ, որ 4-5 տարի էլ հնարաւոր է ձգել ԼՂ հիմնախնդրի կարգաւորումը, սակայն յետոյ մենք կարող ենք բախուել պատերազմի: ԼՂ հիմնախնդիրը կարող է կարգաւորուել միայն այն դէպքում, եթէ երկու երկրներում էլ իշխանութիւններն անառարկելի հեղինակութիւն ունենան: Հայաստանի այս իշխանութիւնների օրօք բացառում է ինդիքի լուծումը: ԼՂ հիմնախնդրի ցանկացած լուծում պէտք է դրուի հանրաքուէի, սակայն այսօր որտե՞ղ դրուի, երբ Ղարաբաղի փոխարէն բանակցում է Հայաստանը: ԼՂ հիմնախնդիրը պէտք է կարգաւորի Ղարաբաղի բնակչութիւնը, իսկ իրաւաբանօրէն Հայաստանը չի կարող ներկայացնել Ղարաբաղի բնակչութեան շահերը:

ՎԻԿՏՈՐԻԱ ԱՐՐԱՀԱՄԵԱՆ

Advertisement for Blue Cross of California health insurance plans. It features a circular diagram showing various plan options like PPO Share 2500 & 3500, PPO Share 1500, PPO Share 1000, PPO Share 500, PPO Saver, and Basic PPO 1000 & 5000. The text promotes 'The Power of Blue' health coverage for every household member and every household budget, highlighting affordable plans for the whole family.

Advertisement for A.B.A. Insurance Services celebrating a 30th Anniversary (1975-2005). It features a cartoon illustration of a man in a suit running. The name 'BEDROS SIAMANTO MARONIAN' is prominently displayed. Contact information includes phone number 818-500-9585 and address 805 East Broadway, Glendale, CA 91205. It also mentions 'ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"' and 'AUTHORIZED AGENT FOR BLUE CROSS OF CALIFORNIA LIC. # 0494056'.



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՇՈՒԱՐԱԾ ԱՄԵՐԻԿԱՆ ԻՐԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՓՆՏՈՏՈՒՔ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆԱՆ

Շուտով իրաքեան պատերազմը կը բոլորէ իր չորրորդ տարին, նոյնքան կամ աւելի երկար քան Ամերիկայի մասնակցութիւնը համաշխարհային երկրորդ պատերազմին: Քիչ մը ամէն կողմերէն արդէն սկսան լսուիլ քննադատութեան ձայներ, իրաքեան պատերազմին ամերիկեան մասնակցութեան վերջ մը գտնելու համար: Մինչեւ Նոյեմբեր 7ի ընտրութիւնները, Պուշ-Չէյնի-Ռեմֆֆելտ եռեակը կը խօսէր «ընթացքը շարունակելու» մասին, որոշում եւ տրամադրութիւն մը որ Պուշի բերնին մէջ ծիծաղաշարժ արտայայտութեան ձեւ առած էր: Մինչ իրաք անխուսափելիօրէն կը դիմէր դէպի քաղաքացիական պատերազմ, եռեակը կը պնդէր «ընթացքը շարունակելու» մասին, եւ այս «մինչեւ յաղթանակ»: Սակայն իրենց չար բախտէն, ընտրութիւնները եկան ձախողութեան մատնելու Պուշը եւ իր Հանրապետական կուսակցութիւնը: Գոնկիտի երկու Տուները - Սենատը եւ Ներկայացուցիչներու Տունը, յանձնելով 12 տարիներէ ի վեր փոքրամասնութեան մէջ մաշած Տեմոքրատի կուսակցութեան: Ձախողութիւնը շնորհիւ էր: Պարտութեան յաջորդ օրն իսկ, իր պաշտօնէն կ'արձակուէր խրոխտ, հպարտ եւ ամբարտաւան Տանըլտ Ռեմֆֆելտ, եւ զինք կը փոխարինէր «CIA»ի նախկին ղեկավար մը, Ռոպերթ Կէյթս անունով: Այս վերջինը շուրջ 30 տարիներ ծառայած էր իշխանութեան, յատկապէս ներկայ նախագահի հօր իշխանութեան օրով: Այս մէկը նշան էր որ վարագործի ետին, երկրի քաղաքական ուղղութեան վրայ, լուրջ ազդեցութիւն կը բանեցնէր հայր Պուշը, եւ արդէն իսկ կը մոռցուէր հուշակաւոր «ընթացքը պահելու» որոշումը, եւ կը խօսուէր «իրապաշտութեան» մասին, եւ «տարբեր կարծիքներ» լսելու եւ հաւաքելու մասին: Այս բոլորին մէջ, քաղաքական նորագոյն կը դառնար Տ. Ռեմֆֆելտ: Խորքին մէջ սակայն, ձախողութիւնը օրուայ նախագահ Պուշինն էր, եւ սակայն, այս մէկը տակաւին երկու տարիներ ունի իշխանութեան գլուխը, պատմութեան անցնելէ առաջ: «Իրապաշտութեան» եւ «ընթացքի փոփոխութեան» երկրորդ արտայայտութիւնը կը կայանար նշանակման մէջ բարձրաստիճան յանձնարման մը, որուն անդամները դարձեալ մարդիկ էին որոնք ծառայած էին հայր Պուշի օրով: Այս մէկը եւս կը նշանակէ որ երկրի ղեկը գաւակէն կ'անցնի հօրը ձեռքը եւ սակայն, անշուշտ զգուշօրէն, վարագործի ետին, առանց մեծ ցնցումի: Իրագեկները չուշացան այս «նրբութիւնը» տեսնելու, հակառակ այն իրողութեան որ այդ նշանակումը յանձնարման մարդիկը, Պէյքըր եւ Հեմիլթըն, 15 տարիներ առաջ այսօրուայ Աֆղանիստանը լքած էն քաղաքացիական պատերազմի եւ Պըն Լէտընի «Ալ-Քալիտա»ին եւ Եւրոպայի մէջ ցեղասպանութիւն մը արտօնած: Սակայն քաղաքականութիւնը ըստուած «աղտոտ» զբաղում մըն է, ունի իր «նրբութիւնները» եւ անցեալի «յանցանքները» չուտով կը մոռցուին, եւ այս «խմաստունները», հաւասարապէս նշանակուած երկու կուսակցութեան կողմէ, արդէն իսկ շարժանքի ի վեր

կը հանդիպին իրաքեան «աւազարտութիւն» լուծում կամ լուծումներ գտնելու համար: Նաեւ «մեծ իմաստուն» մըն ալ Քիսինճըր կոչուածն է, որ սկսաւ բարձրաձայն արտայայտուելու որ «իրաքի պատերազմը զինուորապէս շահուելիք չէ»: Ուրեմն, պէտք է դիմել «փոփոխութեան», ինչպէս որ կը պահանջէն Տեմոքրատները, որ առանց մանրամասնութեանց մէջ մտնելու, կը նշանակէ ցարդ հետեւած ընթացքի փոփոխութեան, մէկ խօսքով, պատերազմականէն անցնիլ դիւանագիտութեան:

ՈՒՐԵՄՆ ԻՆՉ

Ձեւ մը պէտք է գտնուի իրաքէն հեռանալ, վեց ամիսէն, մէկ տարիէն, երկու տարիէն, յստակ չէ: Այս կարենալ ընելու համար, ինչ կ'առաջարկուի:

Ա. Աւելի արագ, եւ աւելի աշխույժ կերպով կազմակերպել իրաքեան բանակը եւ ոստիկանութիւնը, որպէսզի անոնք ստանձնեն երկրի ապահովութիւնը, ամերիկեան ներկայութեան կարենալ վերջ մը տալու համար: Այս սակայն, դերին առաքելութիւնն է թուիլ ըլլալ: Այս տարիները ընթացքին երկրէն ներս հրապարակ իջած են անկանոն «միլիտիա»ներ, Շիի, Սիւննի, Քիւրտ, որոնք սարսափ եւ քանդում կը ստեղծեն երկրէն ներս, օգնութեամբ դուրսէն եկած «փարթիզանները»: Այս «դուրսը» կը նշանակէ Սուրիա, Իրան եւ Ալ-Քալիտա, որոնց հասցէին, տակաւին մինչեւ վերջերս, Ամերիկայի «թշնամիներ» որակումը կը տրուէր: Իրաքը այսօր, դարձած է, շնորհիւ Ամերիկայի, համաշխարհային ահաբեկչութեան կեդրոն: Ուրեմն իրաքեան ապահովութեան ոյժերը կազմակերպումը եւ անոնց որոշիչ ներկայութիւնը տակաւին կը կարօտի: Արդարեւ, դժուարին առաքելութիւն, թերեւս գրեթէ անկարելի: Ամերիկայի եւ իր բանակի ներկայութիւնը յստակ պատճառ է բռնութեան, բախումներու, ձգտուածութեան եւ դժուար է ներկայիս պատկերացնել թէ ինչպէս Ամերիկան պիտի կարենայ իր ձեռքը ազատել, եւ տուն վերադառնալ: Առանց ապահովութեան ստեղծման, Ամերիկայի մեկնելու պարագային, իրաք կամ կը յանձնուի արդէն իսկ սկսած քաղաքացիական պատերազմի ճիրաններուն, որ կրնայ յանգիլ երկրի երեք բաժիններու ստեղծման, Շիի, Սիւննի եւ Քրտական, իր աննախատեսելի բարդութիւններով: Ամերիկացիներէն շատեր կը պնդեն որ այս հարցը աւելի կը վերաբերի իրաքցիներուն եւ այս վերջիններուն գիտնալիքն է թէ ինչ կ'ընեն իրենց երկիրը:

Բ. Դիւանագիտութեան երկրորդ երեսը կը վերաբերի իրաքեան թնձուկին լուծում մը փնտռել եւ գտնել, ոչ պատերազմական միջոցներով: Այլ խօսքով, Ամերիկայի եւ իր մանրմունը դաշնակիցներու կողքին, որոնց մէջ Թոնի Պլէրի Անգլիան, խորհրդակցութեան կանչել Սուրիան եւ Իրանը, երկու երկիրներ որոնց հետ Ամերիկան շատ վատ յարաբերութեան մէջ է, չըսելու համար, նոյնիսկ թշնամական: Չարմանալիօրէն Սուրիոյ եւ Իրանի հետ կապեր եւ խորհրդակց

ՏԱՆՈՒՆ ՈՒՍՍՑԵԼՏ ԵՒ ՍԱՏՏԱՍ ԸՒԻՍԷՅՆ

ՀԱՅԿՆԱԳԳԱՇԵԱՆ

Սոյն տարուան Նոյեմբեր 7ին Մ. Նահանգներու ժողովուրդը կէս ժամանակը (midterm) ընտրութիւնները կատարեց, երկիրը կառավարելը վստահելով դեմոկրատներուն: Թէ ինչու 1994ին ի վեր երկրին ղեկը պահող Հանրապետական կուսակցութեան հանդէպ վստահութիւնը խախտեցաւ ի նպաստ դեմոկրատներուն՝ քանի մը պատճառներ կան, որոնց գլխաւորը իրաքի պատերազմն է: Կարելի չէ անտեսել նաեւ Սեպտեմբեր 11ի օդանավային յարձակումը, որ փճացուց Նիւ Եորքի միջազգային ատելտրական կեդրոնի գոյգ շէնքերը, եւ ատկէ ի վեր թափ առած ու շարունակուող հակամերիկեան եւ հակամիջազգային ահաբեկչական գործողութիւնները՝ իբր հակադարձութիւն նախագահ Պուշի (հանրապետականներու) սխալ քաղաքականութեան: Երեք տարիէ ի վեր շարունակուող եւ վիճեցնող տասներեքամեայ պատերազմը չի շնորհող այս պատերազմը հարկը հազարաւոր իրաքցիներու եւ հազարաւոր ամերիկացի զինուորներու մահուան պատճառ դարձաւ՝ անփառունակ վերջապետութեան մը բոլոր հաւանականութիւններով:

Ճակատագրական այս սխալին գլխաւոր պատասխանատու եւ սահմանադրութեամբ պաշտպանուած նախագահը տակաւին երկու տարի պաշտօնավարելու շրջան ունենալով, «դրուժմը պայթեցաւ» պաշտպանութեան նախարար Տանըլտ Ռոպերթի գլխուն: Ռոպերթի եւ ամբարտաւան այս պաշտօնատարը իր նկարագրին բերումով եւ իրեն խորհրդատու խմբակի հրեայ կորիզին թելադրութեամբ ձեռնարկեց իրաքի վրայ յարձակման՝ այն պատճառաբանութեամբ որ իրաք օժտուած է «զանգուածային բնաջնջման գէնքերով», որոնք սպառնալիք են Ամերիկայի եւ աշխարհի ապահովութեան: Ամերիկեան առաջին

պրպտուամները ի գուր անցան այդ ահաւոր գէնքերը գտնելու: Բայց Ռոպերթի պնդեց.- «Մենք գիտենք որ այդ գէնքերը հոն են» ըսաւ ան, եւ յարձակումը սկսաւ: Բայց հակառակ ամերիկեան խորացող նախադրականութիւն եւ պրպտուամներուն այդ գէնքերը չգտնուեցան ու չգտնուեցան:

Ժամանակի ընթացքին այս նախադրականութեան իսկական պատճառները հետզհետէ աւելի յստակ դառնալով, Մ.Ա.Կ. ստիպուեցաւ միջազգային յանձնախումբ մը ուղարկել իրաք, պարզելու համար «զանգուածային բնաջնջման գէնքերը» գաղտնիքը: Երկար պրպտուամներէ յետոյ Մ.Ա.Կ. յանձնախումբը եւս իր պաշտօնական տեղեկագրով յայտնեց, թէ նման գէնքեր գոյութիւն չունին իրաքի մէջ:

Մինչ այդ սակայն, ամերիկեան օդուժը իր ամենէն արդիական օդանավերով, ամենէն ահաւոր ուժերով եւ հրթիռներով (որոնցմէ ոմանց պատերազմական օրէնքով արգիլուած ըլլալը երեւան ելաւ) քարուքանդ ըրած էին Պաղատաւ, ցիրուցան ըրած էին իրաքեան բանակը եւ բանտարկուած էր երկրին նախագահ Սատտամ Հիւսէյնը: Պատրուակը նպատակին ծառայած էր:

Այժմ, երեք տարի յետոյ, շուրջ 150,000-նոց ամերիկեան բանակը հոն է տակաւին երկու գլխաւոր պատճառներով.- Ա. Իրաքեան քարիւղին սիրոյն եւ Բ. Իսրայէլի մտահոգութիւն պատճառող արաբական գլխաւոր ուժը անվնաս պահելու համար: Կայ նաեւ շուկայ հանուած երրորդը՝ իրաքցիներուն դեմոկրատի ստրկեցնելու համար՝ թէ՛ հաւատացող կայ:

Ի տես պատերազմին պատճառած օրէ օր աճող գոհերուն, հազարաւոր հաշմանդամներուն ու ցաւազարներուն եւ ամերիկեան յարձակման աւելի մոլթ հեռանկարին՝

**PHOENICIA**  
RESTAURANT  
TRADITIONAL LIBANESE COISINE

**Now Open**  
Mon-Thur. 11 am to 11 pm  
Sun. Noon to 11 pm  
Fri. & Sat. 11 am to 2am

**Live Entertainment**  
**Koko Hayitian**  
& Belly Dancing Show

**Patio Dining**

343 N. Central Ave. Glendale, Ca. 91203 e mail: info@phoenicia.us www.phoenicia.us  
For Reservations: Tel: 818.956.7800 Fax: 818.956.0320



**ՐԱՅ ԱՐԺԵԼԵՆԻ**

**ՄԵԾ ԵՐԱԺՇՏԱԳԵՏ ԿՈՄԻՏԱՍ  
ՎԱՐԴԱՊԵՏԻ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԱՐԱԳԸ  
(Վախճանման 70-ամեակի Լրումին)**

**ԴՈԿՏ. Տ. ԶԱԽԷՆ ԳԶՆՅ.**  
**ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆ**

Հայ ժողովուրդի եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ երախտարժան եւ տաղանդաւոր հոգեւորական Կոմիտաս Վարդապետ սուրբ դառնալու տիրապար հոգեւորականներէն կը հանդիսանայ այսօր անտարակոյս, որ ապրեցաւ եւ ստեղծագործեց Մեծ Եղեռնէն անմիջապէս առաջ: Որպէս «կենդանի նահատակ» աքսորէն վերադարձին մնաց հոգեկան հիւանդութեան ճիրաններուն մէջ ու վախճանեցաւ 1935 թուին Ֆրանսայի մէջ:

Կոմիտաս վիրաւոր: Այս կերպ կը բնորոշեմ անմահ Կոմիտաս, նկատի ունենալով իր տառապալից տարիները՝ 1915 թուականէն սկսեալ, իր հոգեխուով ու մտատանջ, գերզգայուն եւ արուեստագէտի նուրբ ու մաքուր անձը գատելով միւսներէն, որոնք ակամատես եղան իր կեանքին, եւ աւելի ուշ շնորհընկալները եղան իր տաղանդին:

1914 թուին էր, երբ Կոմիտաս Փարիզի միջազգային երաժշտական համագումարէն Կ. Պոլիս կը վերադառնար վառ հեռանկարներով, յուսալով որ յաջորդ համաժողովին եւս ներկայ պիտի կարենար ըլլալ Պեռլինի մէջ, ուր հրաւիրուած էր բանախօսելու հայ երաժշտութեան մասին, յատկապէս «Հայոց երգեցողութեան ձեւի» մասին: Սակայն այդ նոյն տարին տակնուվրայ ըրաւ ամէն յոյս եւ լոյս, երբ անսպասելիօրէն բռնկեցաւ համաշխարհային առաջին պատերազմը:

Յաջորդ տարի հայ մտաւորականներ երբ յանակնկալս բանտ կ'առաջնորդուէին, անոնց մէջն էր նաեւ ծայր աստիճան զգայուն եւ նուրբ հոգեկան կառոյցով օժտեալ Կոմիտաս Վարդապետ: Երբ խօսին իսկ արգիլուած էր բանտի խուցերուն մէջ, «Կոմիտաս գտնու մ է ելքը եւ երգեցողութեան միջոցով ցանկացած միտքը հաղորդում է իր բախտակիցներին», ինչպէս գրած է իր կենսագիրներէն մին, որուն համար սակայն թրքատիպ ասաւոր ապտակով մը կը ցնցուէր ան ամբողջ մարմնով գոր չէր մոռնար մինչեւ կեանքին վերջը:

1915 թուականի Ապրիլ 24-ին, հայ մտաւորականներու շարքին՝ Սիւսանյանի, Վարուժանի, Ջարդարեանի, Սեւակի, Տաղաւարեանի, Երուխանի, Յարութիւնեանի, Կիւրճեանի, Զէօկիւրեանի, Քէլէկեանի եւ հարիւրաւոր այլոց հետ Կոմիտաս կը քշուէր Անատոլուի խորքերը: Հոն կրած ասաւոր տառապանքը, ասն ու սարսափը, հայկական կոտորածներն ու թշուառութիւնը, որոնց ականատես եղաւ ինք, հոգեպէս ցնցեցին իր էութիւնը, ու այս մեծ արուեստագէտը վիրաւորեցին անդամանելի կերպով:

Հիմէն խախտած, եւ հոգեկան հաւասարակշռութիւնը կորսնցուցած, Կոմիտաս Վարդապետ «ողջ» վիճակով կը վերադառնար Կ. Պոլիս, եւ տարի մը ետք, 1916-ի գարնան, իր մէջ մնայուն հիւանդութեան նախանշանները կը յայտնուէին, ու ամէն դարմանում կ'ըլլար իսպուստիկ, ու վիրաւոր Կոմիտաս հոգեբուժական հիւանդանոց կը տարուէր: Ողջ էր Կոմիտաս, եւ սակայն «նահատակուած» ու անվերադարձ մեկնած իր մտաւորական եղբայրներուն հետքերով: 1919 թուին Փարիզ փոխադրուելով, մօտ քսան տարի օտարութեան մէջ կատարեալ «անտու-

նի» դարձած, իր իսկ բառերով ու անմահ երգով, հիւանդանոցի պատերուն մէջ ամփոփուեցաւ ինքն իր մէջ:

Պատերազմի տարիներուն շարք մը նամակներ գրուած են Կ. Պոլսոյ պատրիարքարան ուղղուած, ինդրեւ լով որ հէք Վարդապետը աքսորէ վերադարձին հայ եկեղեցիներուն մէջ տօնական առիթներով պատարագէր եւ երգէր, գուցէ այդ ձեւով ազատէր ինքզինք «վիրաւոր» այդ կացութենէն: Բերայի Ս. Յարութիւն եկեղեցիէն երկու անգամ ինդրուած էր որ Կոմիտաս 1915 Մայիս 17ին եւ 1916 Յունուար 2ին պատարագ մատուցանէր, եւ նոյնիսկ ներկայ ըլլար նոյն տարուան Աւագ Շաբթուան եւ Ջատիկի արարողութեանց: Այդ հրաւերներէն գործադրուած է ապահովաբար իր վերջին ճիգով իրագործուած 1915 թուի Ջատիկի իր «վերջին» պատարագը գոր ինք ղեկավարեց, գայն նոր մշակումի մը ենթարկելէ ետք:

«վերջին Պատարագը», եղաւ իր իսկ գոհաբերութիւնը իր կրած խաչին վրայ, գոր խորանի վերածեց

ու մատոյց յետագայ սերունդներուն այնքան հոյակապ կատարումով: Եղեռնի այդ նոյն տարին, հակառակ դժնդակ պայմաններուն որոնց հետեւանքով ցիրուցան եղած էին իր երգչախումբի երգիչները, Կոմիտաս Վարդապետ կարողացաւ վերակազմել իր խումբը եւ պատրաստել վերոնշեալ Ջատիկուան Կոմիտասեան պատարագին: Իր աշակերտներէն Միհրան Թումաճանի վկայութեամբ, Կոմիտաս «մեծ խանդավառութեամբ սկսաւ պատարագի երգեցողութիւնները շարադրել եւ փորձերու ձեռնարկել գիշերը ցերեկին խառնելով», մինչեւ որ երգչախումբը պատրաստ կրցաւ ըլլալ:


Այս կերպ միայն կրնար ըլլալ «վերջին պատարագ»ի փոխանցումը իրմէ ղէպի գալիք սերունդներ, երբ 1915ի Ջատիկի ձրագալոյցին եւ Ջատիկին, Կոմիտասի ղեկավարած «վերջին» պատարագը առաջին անգամ ըլլալով երգուեցաւ Ղալաթիոյ ուխտատեղի դարձած եկեղեցիին մէջ ուր կը հանգչի Յովհաննէս Կոլոտ մեծ պատրիարքը: Նկատի առած վարդապետին անձնապէս կատարած վերջին հպումներն ու վերականգումը Կոմիտասեան Պատարագին, կրնանք անվարան ըսել որ իր ներկայ վիճակով, երբ կ'երգենք գայն անհուն հրճուանքով եւ հոգեզ-

մայլ հնչիւններով, «Պատարագը» իր ամենամեծ ու ամենակարեւոր մասերով Կոմիտաս Վարդապետի երկարամեայ աշխատանքին արգասիքը կը կազմէ, ինքնին ներկայացնելով ոճական ու որակական տուեալներով կուռ ամբողջութիւն մը, որ հիմնականին մէջ աւարտած գործ մըն էր, որպէս Վարդապետին վերջին շունչը:

Իսկ երբ նկատի ունենանք յետագային կատարուած Կոմիտասեան Պատարագին իմբացրութիւնն ու հրատարակութիւնը, մանաւանդ երբ գիտենք թէ Կոմիտաս բոլորովին չէր կրցած վերջնական ձեւ տալ իր գործին, հարկ է համաձայնիլ իր տաղանդաւոր աշակերտ Վարդան Սարգսեանին հետ եւ ընդունիլ թէ «նկատելով որ մեր ձեռքը գտնուած բնագիրներուն մէջ կը պակսէին ինչ-ինչ յարակից մասեր, մեր կողմէ աւելցուցինք զանոնք մասամբ հետեւելով այն ոճին՝ որով վարդապետը ինքն իրմէ դաշնաւորած էր միեւնոյն ձայնեղբէջն ունեցող ուրիշ կտորներ»:

Կոմիտասի Պատարագը երաժշտական բարձր մակարդակի գործ մը ըլլալէ անդին, ստեղծագործութիւն մըն է հայ ժողովուրդի եկե-

Շար.բ էջ 19



**Թէքէեան Մշակութային Միութեան  
Հիմնադրութեան 60-ամեակին առիթով  
ԹՄՄ, Փասապինա-Կոլէնպոլի Մասնաճիւղը  
Կը ներկայացնէ**

**Հովանաւորութեամբ Թեմիս Բարեխանամ Առաջնորդ  
Գերաշնորհ Յովնան Արք. Տէրպէրեանի**

**Նիւ Եորքի Սբ. Վարդան Տաճարի  
Շուշի Պարախումբը**

**Իր Անդրանիկ Միակ Ելոյթով Լուս Անճելլաի Մէջ  
Պարուսոյց – Գեղարուեստական Ղեկավար  
Սեդա Փասապեան-Քանթարճեան  
Մասնակցութեամբ**

**Սիրոսած Երգիչ Յովիկ Գրիգորեանի  
ու երաժշտական Ղեկավար Անդրանիկ Մուրապեանի**

**Տեղի Կ'ունենայ  
Կիրակի, 3 Դեկտ. 2006-ի երեկոյեան ժամը 4:00-ին  
Փասապինա քաղաքի Գոլէճի Մէքսըն  
հանդիսասրահին մէջ**

**1570 E. Colorado Blvd., corner of Hill street**  
(Parking For \$ 1.00 Is Available In The Structures On Bonnie & Hill Streets)

**Տոմսերու արժէք: \$50, \$40, \$30, – \$20**

**Տոմսերու համար հեռաձայնել հեպտեմայ թիւերուն:**  
Գրապոստի Պերճ : 818-244-3830  
Ապրիլ Գրապոստի : 818-243-4112  
Մարալ Դապարեան : 626-296-2921 8.00am-1.00pm.



# ՓԱՂՈՒԹԱՅԻՆ

## ՍՏԱՑՈՒԱԾ ԵՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ «ՅԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ» ՓՐՈՖ. ԴՈԿՏ. ԳԵՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ

ՄԻՄԻ ԵՆ ԱՐՄԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԵՆ ՄԻՄԻ ԵՆ ԱՐԱՔՆ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆԻ մեկենասութեամբ եւ Դոկտ. Երուանդ Քասաբեկի «Նետեղականօրէն հակողութեամբ», Փրոֆ. Գէորգ Խրլոպեանի 406 էջերէ բաղկացող ներկայ այս պատկառելի գիտաշխատասիրութիւնը լոս տեսած է 2006-ին Պէյրութ-Լիբանան: Հեղինակը կը գրէ. «Սոյն հատորը ձօնում եմ այն բոլոր մարդկանց անմահ յիշատակին, որոնք ապրեցին, ստեղծագործեցին, երազեցին ու վախճանեցան մեծ, վեհ, հայրենանուէր ու Աստուածահաճոյ գաղափարներով, որպէսզի մեր կեանքը դառնայ աւելի գեղեցիկ, աւելի կատարեալ, աւելի դրախտային եւ աւելի երջանիկ, որպէսզի նրանց լոյսով, ջերմութեամբ ու գործով մենք աճինք: Ձօնում եմ բոլոր այն մարդկանց անմահ յիշատակին, որոնք իրենց միտքը, հոգին, գործը, քրտինքը, արիւնը եւ պատգամները այնպէս խառնեցին հայ հողին, որ անբաժան դառնան հայ հողին ու հայ մարդը, որ յաւերժ խօսի հայ մարդը:»



սին, կը գրէ հեղինակը, թէ «Յեղասպանութեան բազմակողմանի, համակարգուած մօտեցումը նոր է սկսում կատարել իր հասունացած քայլերը: Սոյն հատորը այդ ուղղութեամբ կատարուող մի քայլ է:»

Արարներու ընթացքին ելոյթ ունեցաւ նաեւ Սիտնիի Հայ Առաքելական Ս. Յարութիւն եկեղեցւոյ «Լուսաւորիչ» երգչախումբը, դեկավարութեամբ՝ Վարդան Սրկ. էլմասեանի: Անոնք պատմական դէպքերու ընթացքով կատարեցին հոգեւոր շարականներ եւ խորհրդաւոր պահեր ստեղծեցին թատրոնի տեւողութեան:

Այս բոլորը անշուշտ չէր կրնար իրականանալ առանց խումբի բեմադրիչ եւ հիմնադիր անդամներէն Պրն. Սարգիս Կիւլէսէրեանի տարած հսկայ աշխատանքին: Ան միասնաբար իր դերակատար ընկերներով, կարողացաւ ձեռնարկը պսակել յաջողութեամբ ու Սիտնիի հայ գաղութին՝ մեծ շուքով հրամցուց հայ ժողովուրդի պատմութեան մէջ խիստ կարեւոր Վարդանանց հաւատամարտը: Ան ոչ միայն բեմադրեց «Աւարայրի Արծիւը» այլ նաեւ ստանձնեց Ղեւոնդ Երէցի գլխաւոր դերը ու հակառակ իր անհանգիստ ձայնին ան բարձր յաջողութիւն արձանագրեց:

Թատերական, երաժշտական եւ պարային նման համերգի մը յաջողութիւնը կ'ամբողջանայ գանազան բաժիններով, ինչպէս բեմադրողարու, բեմավարութիւն, լոյսերու խաղ, երաժշտութիւն եւ այլն... այս բաժիններով անհրաժեշտ է յիշել թատերասէր ու մշակութասէր անձնաւորութիւն Պրն. Հենրիկ Եկանեանը, որ մեծ դեր ունեցած է «Նոր Բեմ»-ի ներկայացումներու յաջողութեան ու ծաղկման մէջ, անոնցմէ վերջինն էր «Աւարայրի Արծիւը»:

Ղեկավարութեամբ Ասատուր Հաճեանի, Համազգայինի «Սեւան» պարախումբը եւս խանդավառեց ու տպաւորեց ներկաները իր անդամներու ցուցաբերած պարային բարձր տաղանդով:

Հանդիսութեան աւարտին խօսք առաւ բեմադրիչ Պրն. Սազո Կիւլէսէրեանը, որ նախ բարձր գնահատեց թատրոնին իրենց մասնակցութիւնը բերող անհատներուն

տարած հսկայ աշխատանքը ու շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք մեծ կամ փոքր բաժինով իրենց ներդրումը բերին այս ձեռնարկին:

Շնորհաւորեց «Նոր Բեմ»-ի դերակատարներուն, պարողներուն եւ երգողներուն ձեռնարկի յաջողութեան համար: Ան նաեւ շնորհակալութիւն յայտնեց Հայ Առաքելական Ս. Յարութիւն եկեղեցւոյ վարչութեան եւ Համազգայինի «Սեւան» մասնաճիւղին ու Հայ Մշակութային Բանոյեան կեդրոնին իրենց համագործակցութեան ու զօրակցութեան համար:

Անշուշտ օրուան խորհուրդը կրկին շեշտեց ու եզրափակեց գաղութի բարեխնամ Առաջնորդ Գեորջ Տ. Ադան Արք. Պալիոգեան: Ան գնահատեց տարուած հայանպատ աշխատանքը, որուն շնորհիւ խումբ մը հայ երիտասարդներ

իրար շուրջ կը բոլորուին եւ ընկերային հաճելի մթնոլորտի մէջ հայերէն խօսքն ու լեզուն կ'արտասանեն ու կը պահպանեն գայն: Սրբազան հայրը նաեւ անդրադարձաւ վարդանանքի խորհուրդին ու մանրամասն բացատրութիւն տուաւ հայ ժողովուրդի պատմականը բնորոշող ճակատագրական այս հանգրուանին շուրջ: Սրբազան հայրը շնորհաւորեց ձեռնարկի բոլոր մասնակիցները եւ յարատեւ յաջողութիւն մաղթեց անոնց: Ապա պահանջով փակեց թատերական այս եզակի ելոյթը:

Վստահաբար «Աւարայրի Արծիւը» անմահ կնիք պիտի մնայ «Նոր Բեմ» թատերախումբի անցեալի եւ ապագայի ներկայացումներու պատմագիրքին մէջ, ինչպէս նաեւ անմոռանալի միջոցառում՝ Սիտնիի հայ գաղութի թատերասէր հանրութեան յիշողութեան մէջ:

ՇԱՐԱՆԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ Կ'ԱՅՅԵԼԷ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԸ

Մարուակուած էջ-էն

Վարդապետական Գաւազան:

ուսումը աւարտելէ ետք, 1992ին մեկնած է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Վանք եւ Ընծայարանի բաժինէն շնջանաւարտ ըլլալէ ետք, 1995ին Աբեղայ ձեռնադրուած է Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարքի ձեռամբ: Իսկ 2004ին ստացած է

Հայր Սուրբը Վանքէն ներս վարած է ժառանգաւորաց Վարժարանի Տեսչութիւնը, եղած է նաեւ Տնօրէն ժողովի անդամ:

Ներկայիս Հայր Սուրբը Վանքէն ներս կը ծառայէ որպէս ուսուցիչ ժառանգաւորաց Վարժարանի եւ Տէրունական Սրբավայրերու մէջ:

**Ս. ՅԱԿՈՒԲ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ**

**Ս. Յակոբ Մծբնայ Ղայրապետի եւ Եկեղեցւոյս Անուանակոչութեան Տօնին Առթիւ**

**ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԸԱՆԴԻՍԱԻՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԴՊՐՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՇՆՈՐՀՈՒՄ ՈՒ ԿԻՍԱՍԱՐԿԱԻԱԳԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ**

**Կիրակի, 3 Դեկտեմբեր, 2006**

Պիտի պատարագէ եւ յաւուր պատշաճի քարոզէ Թեմիս Բարեջան Առաջնորդ Գեորջ Տ. ՅՈՎՆԱՆ Ս. ԱՐՔ. ՏԵՐՏԷՐԵԱՆ

Առաւօտեան Ժամերգութիւն	Ժամը 9:30ին
Ս. Պատարագ	Ժամը 10:00ին
Ձեռնադրութիւն	Ժամը 11:30ին

Հետեւեալ դպիրներուն պիտի շնորհուի դպրութեան աստիճան՝ Լեւոն, Կէրի, Կարապետ եւ Թօպի Գըմգըմեաններուն եւ ապա կիսասարկաւազ պիտի ձեռնադրուի Լեւոն Գըմգըմեանը:

Յաւարտ Ս. Պատարագի եկեղեցւոյս «Կոկեան» սրահին մէջ տեղի պիտի ունենայ եկեղեցւոյս անուանակոչութեան նուիրուած տարեկան ճաշկերոյթը, որուն ընթացքին երկար տարիներու իր ծառայութեան առ ի գնահատանք, եկեղեցւոյս գործօն անդամուհիներէն Տիկ. Լիւսի Պողոսեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի ուղարկած սրբազան կոնդակը պիտի ստանայ:

Սիրով կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու հոգեպարար արարողութեան, շնորհընկալ դպիրներու եւ սարկաւազի ձեռնադրութեան եւ այս առթիւ լսելու սրբազան հօր հոգեշունչ քարոզը:

St. James Armenian Apostolic Church  
4950 W. Slauson Ave.  
Los Angeles, CA 90056  
(323) 295-4588



ԱՅԺՄԵԼԿԱՆ ՆԻԹԵՐ

ՉԱՐԵՐԸ ԿԸ ԳՐՈՎԵՆ ԵՒ ԲԱՐԻՆԵՐԸ ԿԸ ՄՐԱՓԵՆ

ՎԱՐԴԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԻԻԼԿԵՐԵԱՆ

Մերօրեայ մարդուն անկուշտ ցանկութիւնն է, տիրանալ իր հոգիին ու մարմնոյն պահանջները գոհացնող անբաւ բարիքներու:

Երկրային կեանքին ողբերգութիւնն է, այս ափսոսալի վիճակը, որ օրէ օր կը մեծանայ շահաբեր պատեհութիւններու բրգացումով: Շահերու խելացնոր մրցակցութեան մէջ մարդը, ըստ մը կանգ չ'առնելով, հիւանդագին պայքարի մը լծուած է ու կը հաւատայ, թէ կեանքի մէջ միայն այս պարտականութիւնն է, որ պէտք է կատարել եւ ուրիշ ոչ մէկ բան:

Պարզութենէն կ'երթայ դէպի բարդութիւն եւ համեստութենէն՝ դէպի ցուցասիրութիւն:

Հարստութիւնը կը խթանէ, որ աժան բարիքները փոխարինուին սղագին բարիքներով: Անշուք յարկաբաժնէն փոխադրուի հոյաշէն բնակարան, հին կարասիները նետուին փողոց եւ անոնց տեղերը գրաւեն արքայաշուք նորերը, անանուն ինքնաշարժին յաջորդէ լիմուզինը, ու մօտաւոր անցեալի չքաւոր մարդը՝ դառնայ շլացուցիչ դիրքերու վրայ, առանձնաշնորհեալ ներկայութիւն մը՝ հասարակութեան մէջ:

Դրամին անկասելի հոսանքով կատարուած այս փառասիրական վերելքը, գազաթներու վրայ ճառագայթում կուտայ նիւթապաշտ մարդուն, ոչ թէ արքայաշուք կերպարին որ իր անձնաւորութեան, այլ՝ բարոյական որակին բացակայութեան:

Երբ ընչաքաղց մարդը՝ չի բաւարարուի իր յուսթի ստացուածքով, մինչեւ անգամ չի գոհանար աւելիին անօգուտ կուտակու-

մով, կը տարագրէ իր կեանքէն ու հոգիէն, այն բոլոր բարացուցական յատկանիշերը, որ ալ իր կերպարին վրայ չտեսնես ճառագայթ մը, որ բանաւոր արարածը յատկանշէ:

Այս մեղապարտ հակումին մեղսակից է այսօր՝ ամբողջ մարդկութիւնը, առանց բացառելու նմոյշ մը, որ դրամին ձգողական շլացումէն չէ գերուած:

Հայ բարերարներու եւ բարեգործներու փոքրաթիւ փաղանգը մեղադրանքէ գերծ պահելով, շահասերներու մեծամասնութիւնը, որքան շահի ու հարստանայ, այնքան ազահութեամբ կը հսկայանայ: Կը վախնայ դպչելու իր յարաճուն դրամագլուխին եւ կը զոցէ սրտին գոհողութեան ծորակները, որ չգոհաբերէ ազգային, ոչ մէկ ստիպողական նպատակի համար:

Հարստանալու տենչով մաքառող միջին դասակարգի մարդիկ եւս հետամուտ են իրենց ամենօրեայ հետապնդումներով սեփականատէր դառնալ, հնարաւորութեան միջոցներով, եկամտաբեր կալուածներու տիրանալ:

Այս մարաթօնական արշաւին կը մասնակցին մեծ ու պզտիկ մարդկային բոլոր դասակարգերը եւ բոլոր ասպարէզներու մարդիկ, առանց մէկ քայլ նահանջելու եւ գիշերու ուրիշին շահաբեր պատեհութիւն մը:

Մի կարծէք, որ տնտեսական նեղութիւններէ մտրակուած աղքատը, այս մրցումին չի բերեր իր եռանդուն մասնակցութիւնը: Ան ալ՝ կը վազէ, բազմապատկելով իր յոգնութիւնը գանազան գործերու մէջ, հիւծելով իր առողջութիւնը,

առանց արեւափառ բլուր մը նուաճելու:

Դարուս այս նիւթապաշտ ոգին, հոգեկան եւ մտային մնացուն հիւանդութիւն մըն է, որ մարդուն կեանքին կառչած՝ կ'ընկերարկցի անոր, մինչեւ գերեզման:

Դրամը, ոչ մէկ ժամանակ մնացուն բարիք ու երջանկութիւն չէ տուած ընչաքաղց դրամատէրին: Որքան շատ կուտակեր է, այնքան շատ տառապեր է, որոնք պահեր է, այնքան շատ կորսնցուցեր է, որոնք ինայեր է ու ինքզինք գրկեր, աղքատ բաժնուեր է կեանքէն, Աստուծոյ ցոյց տալով իր պարապ հոգին եւ պարապ ձեռքերը:

\*\*\*

Կրնանք պարզեւ մը, շքանշան մը, նիւթական բարիք մը ժխտել մուսլ մտածումներէ խթանուած, բայց դրամին մատուցումը, իրաւկամ անիրաւ, ինչպիսի միջոցով ալ դայ՝ կ'ընդունինք ու չենք մերժեր:

Նիւթապաշտը՝ դրամի դէպերուն վերեւ թառած, ալ անկարող է նկատելու իր կեանքին մէջ ուրիշ ոչ մէկ նպատակ:

Այս ողորմելի վիճակին մէջ կգտնուինք գրեթէ ամէնքս ալ, դրամին հետ մեր սերտ ու սեղմ աղերսներով: Ձերբազատուելու համար այս կապարացած մտայնութենէն, միակ լուսաւոր ճամբայ մը կայ, ուրկէ քալեց Փրկիչը եւ արժանացաւ յարուցեալ կենաց փառքին:

Ներկայ քրիստոնեայ աշխարհին մէջ, դժուար է գտնել բարեհոգի մարդիկ, որ գտնեն ու քալեն այդ ծաղկաւէտ ճանապարհէն:

Նիւթին տիրակալութիւնը՝ տիեզերքի անպարագրելի տարածքներուն վրայ, արգաւանդ հողաշերտ մը ազատ չէ թողած, որ հոն առաքինութիւնը աճի եւ ծնունդ տայ հրեշտակներու:

Հարստութիւնը ինքնին, չարիք մը չէ, երբ գործածուի բարոյական չափանիշով, յօգուտ բարեսիրական նպատակներու:

Եթէ յաջողեցար նիւթին սեղմիրան պատեանէն հաւատքով դուրս ելլել, շահած կ'ըլլաս մեղքին դէմ ճակատամարտը եւ անմահութեան դարպասները հորիզոնական լայնքով կբացուին հոգեւոր կեանքիդ առջեւ:

Մեծ բարիքներու բրգացում չի պահանջուի մեղաւորէն, որ բեկանէ մեղքին շղթաները ու դառնայ ազատ մարդ: Քիչն ալ բաւարար է, որ պրծիս սաստանային ստրկութենէն:

Սխալ է մտածելը, թէ միայն հարստանալով, կրնաս ապահովել երջանկութիւնը: Դրամով կրնաս ճամբորդել տիեզերքի մէջ ամէն տեղ, մինչեւ ամպերէն վեր լուսինը, բայց ԵՐԿՆՔԻՆ աստուածային շողարձակում տալ անոր, ալ կը դադրիս երկրի քաղաքացիութենէն եւ քրիստոնեայ աշխարհը քեզ կը յորջորջէ ԵՐԿՆԱՔԱՂԱՔԱՅԻ:

Գիտե՞ս ինչ է մեր ժամանակի նողկալի երեւոյթը, որ մարդը կ'անահանգստացնէ հոգիով եւ մարմնով, գլխիվայր շրջումն է, արժէքներու եւ արժանիքներու:

Ցաւալի է, որ կ'ամչնան անոնք, որ պէտք է հպարտանան եւ կը պարծենան անոնք, որ պէտք է ամչնան:

Չեն խօսիր ու բարբառիք անոնք, որ պէտք է աղաղակեն ու տաղերգեն ու կը խօսին ու կը ժխտեն անոնք, որ պէտք է լուեն ու պապանձին:

Քանի որ չարին յարձակումներուն դէմ՝ հակադարձակում չկայ, բնական է, որ չարը շարունակէ առաւել սանձարձակութեամբ իր

Մար.ը էջ 19

**Wahib's**  
**MIDDLE EAST RESTAURANT**  
 الشرق مطعم  
**MEDITERRANEAN LEBANESE FOOD**

**COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"**

**CATERING FOR ALL OCCASION**

**FAMILY ENTERTAINMENT BANQUET HALL EVERY FRIDAY ~ & ~ SATURDAY NIGHT INTERNATIONAL ~ ARABIC CALL FOR RESERVATION**

**BELLY~DANCING**

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.  
 TEL 626-281-1006 626-587-1048  
 FAX 626-281-3641

PHOTO / CONCEPT- J / D - 2006 ©TEL( 626 ) 795-4493



Կազմակերպությանը "Զաջ Նազար" հեռուստաժամի / ամսագրի և Հայաստանի ֆիլհարմոնիայի  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ, ՀԱՇՄԱՆԴԱՍ  
 ԵՐԵՎԱՆԵՐԻ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
 7-ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ԹԵԼԵԹՈՆ

# 7th ANUAL TELETHON 2006

FOR

ARMENIA'S DSIAbled AND ORPHAN CHILDREN'S CHRISTMAS GIFT FUND

**Sunday December 3, 2006**

**7:00pm - 2:00am**

**AMGA CHANNEL 26 GLENDALE,  
 CHANNEL 30 JAM-E-JAM  
 INTERNATIONAL**



**Yerevan  
 Printing**  
 GLENDALE, CALIFORNIA

**WELLS FARGO**

Wells Fargo is a proud participant at 7th Annual ARMENIA'S DISABLED & ORPHAN CHILDREN GIFT FUND

Please make your tax deductible donations payable to: **A.C.C. GIFT FUND**

Wells Fargo account number - **3673881821**

For more information please contact Wells Fargo Branch at  
**535 N. Brand Blvd., Glendale, CA. (818) 550-5021**  
 A TAX-DEDUCTIBLE DONATION

MANUTYAN DISTRIBUTING

**TAMARA**  
 ICE CREAM

CROWNE PLAZA  
 HOTEL & RESORTS

Conrad's Casino  
 LOS ANGELES

**GLENDALE  
 KIA**  
 GENERAL SPONSORS

Glendale West Pharmacy  
 and  
 Medical Supply

Glendale Medical Pharmacy  
 ԳԼԵՆԴԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ  
 Dr. Robert & Dr. David

**Remedy DRUGS**

APOLITANO  
**GRAPSEED**

**YEGHYAYAN  
 & ASSOCIATES**  
 Vartkes Yeghayan  
 Attorney at Law

**LE FOYER  
 OJAKH**  
 BANQUET HALL  
 NICK NISHANIAN  
 Owner President

**Golden Farms  
 Market Plaza**

**UNIVERSAL  
 SERVICE EXCHANGE, INC.**  
 MONEY TRANSFER

**SARIAN**  
 ORGANIC HONEY FARM

**GEFER FARMS  
 MARKET**

Sandy's Rug & Accessory  
 Highest quality machine made  
 Persian Rug  
 Charles Meghikian

Orgnaized by Kach Nazar Publication and TV Show, Along With Armenia's National Philharmonic.



ՊԱՏՄԱԿԱՆ

ԵՐԵՔ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐՈՒՄ՝ ՍԵՐՆԴԻՑ ՍԵՐՈՒՆԴ (ՅԱՊԱԿՈՒՄՐՆԵՐՈՎ)

Ծ.Խ. Ներկայ յօդուածը կը վերաբերի Մանասերեաններու ընտանիքի քաղաքական եւ քաղաքացիական գործունէութեան: Փաստացի հիմնաւորումներով ներկայացուած է Մանասերեան ընտանիքի 3 սերունդներու անձնուէր ծառայութիւնները Յայրենիքի եւ Յայ Ժողովուրդի նկատմամբ, սկսած առաջին Յամաշխարհային Պատերազմէն մինչեւ մեր օրերը: Այդ յօդուածին մէջ արտացոլուած փաստերը կը հաստատեն Մանասերեաններու բարոյական բարձր կերպարը, ազգային կերտուածքը, անոնց գործօն եւ անձնուրաց մասնակցութիւնը մեր Յայրենիքի եւ հայ ժողովուրդի զարգացման նպաստող հայրենաճուղի եւ ազգանպաստ գործին:

ՌՈՒՋԱՆ ՊԷՊԱՆԵԱՆ

Մանասեր, Նորայր եւ Թաթուլ Մանասերեաններ. պապ, որդի եւ թոռ պատգամաւորների երեք սերունդ է տուել Մանասերեանների յայտնի տոհմը: Տոհմի նախապապը՝ Մանասեր Աբրահամովը, գաղթելով Պարսկաստանի խոջ գաւառից, գիւղ է հիմնադրել ներկայիս Գետազատ, նախկին՝ Հաջի-Կալա վայրում. «Հաջի»՝ նշանակում է մուղսի, այսինքն՝ որպէս երեք կրօնների սրբավայրերի օճախ Երուսաղէմ ուխտագնացութեան մեկնած եւ ժողովրդի կողմից ընդունուած պատուելի կրօնաւոր անձ: Այսպէս, մուղսի Մանասեր Աբրահամովը՝ ինչպէս գրուած է նրա տապանաքարի վրայ, իր շուրջն է հաւաքել տարբեր արհեստաւորների, հիմնադրել գիւղ, կառուցել ջրաղաց, որն այդ ժամանակ բնակավայրերի կենսագործունէութեան հիմնական աղբիւրն էր: Ջրաղացը սպասարկել է շրջակայ 10-12 գիւղերին՝ Ողջաբերդից սկսած մինչեւ Այգեստան ու Դուլին գիւղերը: Իսկ դա լուծում էր հացի խնդիրը:

- Տոհմապապ այդ ջրաղացը, որը շահագործել են Մանասերի չորս որդիները, ժառանգաբար փոխանցուել է պապիս՝ Յովհաննէսին, ապա նրա եօթ ժառանգներին՝ մինչեւ 30-ական թուականները, երբ կոլեկտիւացման արդիւնքում այն բռնագաւթուել է խորհրդային իշխանութեան կողմից, - չիշում է իմ գրուցակիցներից տարեցը՝ Նորայր Մանասերեանը եւ անթաքօյց հպարտութեամբ աւելացնում, - բայց դեռեւս երկար ժամանակ, անգամ ջրաղացը քանդելուց յետոյ էլ այդ վայրը պահպանում էր «Մանասերի ջրաղաց» անունը: Ինչպէս ասում են, մարդը պիտի այնպիսի գործ անի, որ իր անունը երկար չիշուի:

Պապիս եօթ ժառանգներից միայն Աբրահամովի անունով Մանասեր Նորեյրայր է քաղաք տեղափոխուել եւ, ինչպէս ընդունուած էր ասել, ուսումնական մարդ դառնում. հայրս ստանձնում է նրա ինամակալութիւնը: Մանասերն ընդունւում է համալսարանի բանասիրական ֆակուլտետ՝ գերմաներէն լեզուի մասնագիտութիւն ստանում, յետագայում, որպէս Երեւանի պետական համալսարանի օտար լեզուների ամպիոնի հիմնադիր, ակտիւօրէն մասնակցում է նաեւ պոլիտեխնիկական ինստիտուտի հիմնադրմանը, - շարունակում է Ն. Մանասերեանը:

Մանուկ Աբեղեանի եւ Գիրգոր Ղափանցեանի ժամանակակիցն ու մտերիմն անմասն չէր կարող մնալ ժամանակի աշխարհացունց իրադարձութիւններից: Մանասեր Մանասերեանը ձեւարանից զօրակոչուել է ուսակական բանակ, որտեղ նրա ընդունակութիւնները նկատելով, գործուղում են Թբիլիսի սպայական դպրոց: Աւարտելուն

պէս սկսում է պատերազմը, օրակարգում էր Հայաստանի պաշտպանութեան հարցը: Վերադառնալով Հայաստան, զինուորագրուել է ազգային ազատագրական պայքարին: Նրան վստահում են Սարգսրապատում մահապարտների գնդի հինգերորդ վաշտի հրամանատարութիւնը: Մանասեր Մանասերեանն իր վաշտով արժանի հակահարուած է տալիս թրքական զօրքին եւ կարեւոր դեր խաղում 1918 թ. Մայիսի 28ին Սարգսրապատի ճակատամարտի յաղթանակի հարցում:

Արտաշատի շրջանում երեք Գետազատ, Մրգանուշ եւ Վարդաշէն գիւղերում դպրոց է հիմնադրել եւ տնօրինել: Ժողովրդականութիւնը, մեծ յարգանքն ու մարտական սիրանքները հաշուի առնելով էլ, թեքեւս, Արտաշատի ազգաբնակչութիւնը նրան վստահում է Առաջին Հանրապետութեան խորհրդարանում իր ձայնը ներկայացնելու բարձր պատիւը. Մանասեր Մանասերեանն ընտրուել է խորհրդարանի պատգամաւոր:

Յետագայում, տարիներ անց, մեծ վաստակ ունեցող մանկավարժին, որը դասաւանդում էր մանկավարժական ինստիտուտում, ապա բժշկականում՝ որպէս ամպիոնի վարիչ, կրկին հաշուի առնելով իր անցեալը, աքսորում են Ալթայի երկրամաս:

- դրանից երկու տարի առաջ՝ 37ին Հարաւային Ղազախստան են աքսորում ծնողներին: Հայրս միակ մարդն էր գիւղում, որ կոլտնտեսութիւն չմտաւ. բոլորին բռնի կամ կամաւորի անուան տակ կոլեկտիւացրին, հայրս կտրակաւնապէս հրաժարուեց եւ լինելով պատերազմի հաշմանդամ, միայն իր սեփական հողակտորի հաշուին էր դժուարութեամբ ընտանիքը պահում, - ասում է Ն. Մանասերեանը:

Մանասերին պատերազմից յետոյ ազատում են եւ կարծ ժամանակ անց նորից աքսորում հակասովետական գործունէութիւն իրականացնելու անուան տակ. վերադառնում է 56ին՝ առողջութիւնը կորցրած, աշխատանքի է անցնում մանկավարժական ինստիտուտում, իսկ բնակարան ստանում է արդարացուելուց յետոյ միայն: Մահացել է 1978 թուականին, 87 տարեկան հասակում:

- Երբ 46ին աքսորից վերադարձաւ մեր ընտանիքը, հայրենի օճախից մնացել էր մի սենեակ, իր փոքր նախասենեակով, մնացածը՝ ամբարը, նկուղը, հնձանը, գոմը հիմնովին աւերուել էին: Մանասերի վերադարձին արդէն հայրս մահացել էր, ես 20 տարեկան էի:

Մ.Մանասերեանի սիրանքների մասին գրուել է Հ. Թուրշեանի «Սարգսրապատ» վէպում, ինչպէս նաեւ Ռ. Կարայանի «Փրկութիւն» վիպակում: Սարգսրապատի վերաբերեալ Մանասերեանի յուշերը

տպագրուել են «Սովետական Գրականութիւն» ամսագրի 1968 թ. N5-ում եւ նոյն թուականին՝ «Հայկական Բանակ» ամսագրի N2(16)-ում:

Յաջորդ սերնդի ներկայացուցիչը՝ Նորայր Մանասերեանը, Երեւանում աւարտելով դպրոցը, լուսաւորութեան նախարարութեան գործուղմամբ մեկնում է Արտաշատի Ներքին Դուլին գիւղը՝ ուսուցիչ լեզու դասաւանդելու: Այնուհետեւ մէկ տարի անց ընդունւում է Մոսկուայի Մ. Լոմոնոսովի անուան պետական համալսարանի տնտեսագիտութեան ֆակուլտետը: Վերադառնալով, աշխատում է Գիտութիւնների ազգային ակադեմիայի տնտեսագիտութեան ինստիտուտում, միաժամանակ, ընդունւում ասպիրանտուրա, պաշտպանում է թեկնածուական եւ դոկտորական թեզերը. 1982 թուականին նշանակուել է ինստիտուտի ագրարային հիմնախնդիրների բաժնի վարիչ, որից յետոյ դասաւանդում է Ժողովուրդագիտութեան ինստիտուտում, ընտրուելով քաղաքատնտեսութեան ամբիոնի վարիչ:

1988ին Նորայր Մանասերեանը հրաժարուել է կրկին ամբիոնի վարիչի թեկնածու առաջադրուելուց, միաժամանակ յայտարարում է կուսակցութիւնից դուրս գալու մասին. պատճառը դարաբաղեան շարժման ակտիւ մասնակցութիւնն էր դեռեւս սկզբնական շրջանում, երբ այն լուրջ ճնշումների էր ենթարկուել:

- Հայրս միշտ ասում էր՝ երբեք չվախենաս «սրանցից», - հենց այդ սկզբունքով էլ առաջնորդուել է իր յետագայ ուղին ընտրելիս:

1990 թուականին առաջադրուել է ընտրուել Հայաստանի Երրորդ Հանրապետութեան Գերագոյն Խորհրդի պատգամաւոր:

Այս նոր ասպարէզում եւս նա հիմնաւորում էր, ազգագրութեան սակայն քաղաքականութեան իրականացման կողմնակիցն ու ջատագովն էր: Իր ողջ եռանդը ներդնելով, հնարաւորն անում է նպաստելու տնտեսութեան կայացմանը, դեկավարում է ԳԽ ազգարային յանձնաժողովի աշխատանքները:

Դասաւանդել է Ժողովուրդագիտութեան ինստիտուտում, Երեւանի, Իջեւանի եւ Արցախի պետական համալսարաններում: Ներկայումս դասաւանդում է Ռուս-հայկական համալսարանում՝ ագրարային հարցի հիմունքներ առարկան: Պարբերաբար հանդէս է եկել մամուլում: Ագրարային հարցի վերաբերեալ ուսումնասիրութիւնների ամփոփ արդիւնքը հանդիսացաւ «Ագրարային հարցը երէկ եւ այսօր» գիրքը, որում լուսաբանուել է հիմնախնդիր դրուածքը Արտաշէս թագաւորից մինչ այսօր: Անուանի տնտեսագէտն այսօր էլ ամենասուր հիմնախնդիրներից է համարում

գիւղատնտեսական խնդիրները, որոնք նոյն հրատապութեամբ ծառայած են տնտեսութեան առջեւ. «Մենք այսօր ունենք 950 գիւղ, որոնց 80 տոկոսը լեռնային են: Դրանց մեծ մասի գոյութիւնն այսօր, այսպէս ասած՝ ուրբանիզացման վտանգին ենթակա է: Արարատեան դաշտավայրը մեր ազգային շտեմարանն է, իսկ լեռնային շրջանները՝ ազգային գենոֆոնդի, ազգային դիմագծի պահպանման աշխարհագրական տարածքը»:

Ներկայումս զբաղւում է Հայաստանի ագրարային հատուածի զարգացման հայեցակարգի մշակման աշխատանքներով:

Ն. Մանասերեանի կինը ճանաչուած աշխարհագրագէտ եւ վաստակաշատ մանկավարժ Ռիմա Մանասերեանն է. 1970-ական թուականներին ընտրուել եւ վերընտրուել է Երեւանի քաղաքային խորհրդի պատգամաւոր՝ նոյնպէս իր մասնակցութիւնն ունենալով ընտանիքի պատգամաւորական աւանդոյթների ձեւաւորման գործում:

Արդէն «տոհմական դարձած մասնագիտութիւնը» մեր օրերում շարունակում է Նորայր Մանասերեանի որդին՝ Աժ Երրորդ գումարման պատգամաւոր, տնտեսագիտութեան դոկտոր, պրոֆեսոր Թաթուլ Մանասերեանը: Թ. Մանասերեանը 1978 թուականին ընդունուելով Երեւանի պետական ժողովրդական տնտեսութեան ինստիտուտը, 1980ից ուսումը շարունակել է Կիւեւի պետական համալսարանում: 1978 թ. պաշտպանել է «Միջազգային դրամական յարաբերութիւնները» թեկնածուական թեզը: 1984-1989 թթ. աշխատել է նախկին ԽՍՀՄ Պետպլանի Պլանաւորման եւ նորմատիւների գիտահետազոտական ինստիտուտի հայկական մասնաճիւղում՝ մասնակցելով Հայաստանում առաջին արդիւնաբերա-առեւտրական համալիրների ձեւաւորմանը:

Միջազգային տնտեսագիտութեան ասպարէզում զարգացնելով գիտելիքները, 1990 թ. աւարտում է Գանատայի Եորթի համալսարանի միջկառավարական ծրագիրը եւ վերապատրաստուել «Royal Bank of Canada»-ի Թորոնթոյի կեդրոնում: Նոյն թուականին հրաւիրուել է ԱՄՆ Քոնկրէսի կողմից Ուաշինկթըն՝ Հայաստանին մարդասիրական օգնութիւն ցուցաբերող ենթայանձնախմբի հետ աշխատելու: Թաթուլ Մանասերեանը 1982 թուականից դասաւանդելու էր ընդունուելով հանդէս է եկել Երեւանի, Վիլնուսի, Անտվերպէնի, Եռլընդսի, Բանգորի համալսարաններում: Հայաստանում, Ռուսաստանում, Ուկրանիայում, Լիթվիայում, Էսթոնիայում, Վրաստանում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Շուեյց-մանիայում,

Շար.ք էջ 17

Advertisement for Jessica Demirdjian, Realtor, Prudential California Realty. Includes contact information: 9915 Mira Mesa Blvd., Suite 100, San Diego, CA, 92131. Phone: 858.653.6400. Fax: 858.653.6440. Cell: 619.846.7738. Email: jessicad@prusd.com.



### ՎԱՅՑ. ԵԿԵՂԵՑՒՅ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄ ՆՈՐ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Անցնող երեք տարիներու ընթացքին Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի գլխաւորութեամբ եւ յաճախ իր հեղինակութեամբ, Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմը հոգեւոր բովանդակութիւն ունեցող մի քանի տասնեակ գիրքերու եւ կամ գրքոյկներու հրատարակութիւններ կատարեց՝ գոհացում տալով ընթերցասէր հաւատացեալներուն:

Վերջերս Առաջնորդ Սրբազան Հօր հեղինակութեամբ տպուեցաւ Անգլերէնով "BOOK OF SERMONS" Քարոզագիրքը, որուն մեկենամներն են Բրշ. Տոքթ. Վարուժ Սարկաւազ եւ Տիկինը Լենա Ալթըպարմաքեան եւ իրենց դուստրը Մարիա:

Այս գիրքի հրատարակութեան գլխաւոր նպատակն է հասնիլ Հայց. Եկեղեցւոյ անգլիախօս հաւատացեալներուն՝ անոնց հայթայթելով գեղեցիկ առիթը մօտէն ծանօթանալու Սրբազան Հօր խոկումներուն եւ ներքին ապրումներուն:

Հոգեւոր պատգամներու եւ վերապրումներու այս գիրքը հինգ տարիներու ժամանակաշրջան մը կ'ընդգրկէ, որ ո'չ թէ միայն իր խոկումները կ'արտայայտէ, այլ ցոյց կու տայ նաեւ իր առաջնորդութեամբ արձանագրուած ընդարձակ ծառայութեան եւ իրագործումներուն տարողութիւնը, ինչպէս նաեւ այն միջոցները, որոնց շնորհիւ Աստուծոյ կողմէ իրեն վստահուած առաքելութիւնը զարգացած է ժամանակի ընթացքին:

Գիրքին մէջ տպուած են Հայց. Եկեղեցւոյ մէջ զանազան առիթներով իր խօսած պատգամները, ինչպէս նաեւ հանդիսութիւններու ընթացքին, Թեմական Պատգամաւորական Ժողովներուն, Միջ-Եկեղեցական արարողութիւններուն, եւ այլն: Սրբազան Հօր քարոզները հաւատացեալները կ'առաջնորդէ դէպի աղօթական եւ Քրիստոնէական կեանքի ճանապարհին, որ միեւնոյն ատեն կը հայթայթէ աղբիւրը եւ ուղղութիւնը, մինչ մեր կեանքը կ'առաջնորդենք դէպի

Քրիստոսի փրկագործութեան ուղիին:

A HISTORY OF THE ARMENIAN CHURCH With Thirty-Five Stories գիրքին առաջին հրատարակութիւնը կատարուած էր Հայց. Եկեղեցւոյ Արեւելեան Թեմի կողմէ, որուն հեղինակն է հանգուցեալ Բրշ. Դոկտ. Յակոբ Սրկ. Ներսոյեան: Արեւելեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանի արտօնութեամբ կատարեցինք երրորդ հրատարակութիւնը: Գիրքին մեկենամներն են Տէր եւ Տիկին Կրէյկ Ջրգոյեան:

Յաջորդ հրատարակութիւնը Անգլերէնով գրքոյկ մըն է "Prayer Mirrors Your Life" խորագրով, որուն մեկենամներն են Թեմի քարերարներէն Տէր եւ Տիկին Վարդգէս Պարսամ: Գրքոյկին նպատակն է սորվեցնել մեր երիտասարդութեան, որ յաճախ աղօթեն եւ աւելի մօտ զգան Ամենակարող Աստուծոյ: «Երբ կ'աղօթենք, մենք Աստուծոյ ներկայութեան մէջ ենք» կ'ըսէ Սրբազան Հայրը իր նախաբանին մէջ: «Իր կարգին Աստուած մեր կեանքին հայեցիլն կը դառնայ եւ մեզ կը մղէ մեր կեանքի ընթացքը բարելաւելու»:

Միւս հրատարակութիւնները Հայերէնով եւ Անգլերէնով պատկերազարդ չորս գրքոյկներ են՝ «Յիսուսի կեանքը», "The Life of Jesus," «Յիսուսի Հրաշքները», "The Miracles of Jesus," «Յիսուսի Բժշկութիւնները», "The Healings of Jesus," եւ «Յիսուսի Առակները», "Parables of Jesus." Այս գրքոյկները տպուած են 2006 թուին Երեւանի մէջ՝ մեկենամութեամբ Ներսէսեան ընտանիքի եւ ձօնուած են իրենց հօր՝ Գէորգ Ներսէսեանի հայրենամուտէր եւ եկեղեցանուէր խնկելի յիշատակին:

Իւրաքանչիւր գրքոյկի մէջ «Փոխան Յառաջաբանի» իր խօսքին մէջ Սրբազան Հայրը կոչ կ'ուղղէ Թեմի պատանիներուն կարդալ գրքոյկը եւ հոգեպէս գօտեպնդուիլ հաւատքով եւ ծառայութեան ոգիով:

### ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻՆ ԱԼԲԵՐՏ ԳՐԵԱՇԱՐԵԱՆ

Խոր գիշերների փակ դռներից ներս, Ահա, մի հսկայ օրերով անցուն, Պեղում է մտքի խորքերը անհուն, Թե, ինչպես գտնել մեր մշտականայուն «Այբ ու Բեն»ը պահուած երկնքում:

Որ միշտ հայ լեզուն հայատառ գրի, «Ազգ» եւ «Յայրենիք» հաւատք, յոյս եւ սէր, Եւ նրանով միշտ թող յաւերժ փայլի, Մեր Լուսաւորչի կանթեղը լոյսի:

Եւ մեր հայրենի ժայռերի պէս կուր, Լիմեն անասան հօգր հսկաներ, Բերդեր ու վահան, սուրեր անցկուց, Ինչպէս մեր նախնիք եղել են դարեր:

Եւ այսպէս անվերջ, մտքեր ու մտքեր Յասնելու մինչեւ այն բարձր կէտին՝ Ուր աստուածային գիր ու գրիչներ Մեր ազգ ու լեզուին պիտի լինէին:

Եւ հիմա արդէն աշխարհն հայոց, Քո իսկ տառերով արդ կարդում է քեզ Ինչպէս լոյս զուարթ գրքերը սրբոց, Խօսքն Աստուծոյ եւ առաքելոց:

Քեզ ով վարդապետ ու մեծ ուսուցիչ, Քեզ, իմաստութեանց բարձրագոյն դպրոց, Դու մեր անխափան խօսք, թուղթ ու գրիչ Դու լուսաճաճանց անուն Սուրբ Մաշտոց:

### ԵՍ ԱՅՆՊԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ԱՐՄԵՆՈՒԿԻ ԲՈՅԱՄԵԱՆ

Ես այնպէս սիրում եմ Քո ժպիտը մեղաւոր, Որն այգաբացին Դառնում է պայծառ Լցնում է հոգիս Գոյներով վարար Եւ երագներս Դարձնում լիիրաւ:

Ես այնպէս սիրում եմ Քո աչքերը մեղաւոր, Որն իր մէջ պահում է Գաղտնիքն ու կիսանի, Որոնց մէջ հանգիստ Լողանում եմ ես Երագելով միշտ Չքնաղ երագներ:

Ես այնպէս սիրում եմ Քո ծիծաղը մեղաւոր Որ կարկաչում է Գետակի նման,

Եւ գալարուելով Իր հունով անվերջ Եւ ինձ տանում է Յեռուներն անդարձ:

Ես այնպէս սիրում եմ Քո հայեացքը մեղաւոր Որ միշտ խոցում է Վայրենի փշոտ Մասրեմու նման Ցաւեցնում հոգիս Եւ յետոյ նայում Դեմքիս շիկացած:

Ես այնպէս սիրում եմ Յոգիդ մեղաւոր, Որ գիտէ սիրլ Եւ չեմքեմ, Որին չգիտես Սանձեր մինչեւ վերջ Ինչպէս առուակի Երգը միալար:

### ԵՐԵՔ ԽՈՐՇՐՂԱՐԱՆՆԵՐՈՒՄ՝ ՍԵՐՆԴԻՑ ՍԵՐՈՒՆԴ

Շարունակուած էջ 16-էն

ցարիայում, Գանատայում, Չինաստանում, Թայլանդում եւ ԱՄՆում տպագրուած 400ից աւելի յօդուածներ, 11 գիտական մենագրութիւնների հեղինակ է: Հարաւային Գալիֆորնիայի Ռեյլընդս համալսարանի կողմից 1997 թ. նրան շնորհուել է «Տարուայ լաւագոյն պրոֆեսոր» մրցանակը: Այդ եւ Երեւանի պետական համալսարանների միջեւ գիտագործնական համագործակցութեան հաստատման նախաձեռնողն է:

1997 թուականից վերադառնալով Հայաստան, Մանասերեանն ակտիւօրէն մասնակցում է տնտեսական քաղաքականութեան, յատկապէս Հայաստանում արդիւնաբերական քաղաքականութեան մշակման աշխատանքներին: Բազմաբնույթ էր նրա գործունէութիւնն այդ տարիներին, 1998-1999 թթ.՝ ՀՀ նախագահին կից քաղաքացիական տնտեսական յանձնախմբի նախագահ, 1999-2000 թթ.՝ Զբօսաշրջութեան զարգացման հայկական միութեան նախագահ, 2000-2001 թթ.՝ ՀՀ արտգործնախարարի խորհրդական եւ միջազգային կազմա-

կերպութիւնների բաժնի պետ, 2001-2003 թթ.՝ Ռազմավարական եւ ազգային հետազոտութիւնների կեդրոնի գիտական ղեկավար: 2003 թուականին հիմնադրել է «Այլընտրանք» հետազոտական կեդրոնը, հեղինակել է տնտեսագիտական մի շարք գրքեր, այդ թւում՝ «Հայաստանի տնտեսութիւնը անցման փուլում. Ազգային դրամանիշ», «ՀՀ Տնտեսութեան եւ ձեռնարկատիրութեան զարգացման արդի խնդիրները», «Doing Business in Armenia: Investment Climate», «Հայաստանի տնտեսութեան առողջացման հիմնական առաջնահերթութիւնները», «Նոր տնտեսական քաղաքականութեան ուրուագծերը», «Միջազգային Նոր տնտեսակարգ. հիմնահարցեր եւ զարգացումներ», «Հայաստան 2020. անվտանգութեան եւ զարգացման ռազմավարութիւն», «Եւրոն, արժուեթային երկբեւեռ աշխարհը եւ Հայաստանը», «Տնտեսական անվտանգութեան մարտահրաւէրները» եւ այլն: Թ. Մանասերեանն այսօր բազմաթիւ օրէնքների հեղինակ է, միաժամանակ շարունակում է իր գիտական եւ մանկավարժական գործունէութիւնը:





ՄԱՐԶԱԿԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ

ԱՆԳՆՈՑ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆուտպոլի առաջնութեան տասներորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 2 columns: Team names and scores. Includes matches like Զարլըն - Եվըրթըն 1-1, Ֆուլհամ - Ռիտինկ 0-1.

Table with 6 columns: Team names and statistics. Includes matches like Առաջատար խումբերու դասաւորումը, Մանչեսթըր Եունայթըտ 14 11 2 1 30-7 35.

ԳԵՐՄԱՆԻՈՑ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ կրմանիոյ ֆուտպոլի առաջնութեան տասներորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 2 columns: Team names and scores. Includes matches like Շալքէ - ՎՖԼ Պոխում 2-1, Գոլսպուրկ - Նիւրնպըրկ 1-1.

Table with 6 columns: Team names and statistics. Includes matches like Առաջատար խումբերու դասաւորումը, Շալքէ-04 14 9 2 3 25-16 29.

ԻՏԱԼԻՈՑ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Իտալիայի ֆուտպոլի առաջնութեան տասներկորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 2 columns: Team names and scores. Includes matches like Քիեւօ - Ուտինէզէ 2-0, Ա. Սէ. Սիլան - Մեսինա 1-0.

Table with 6 columns: Team names and statistics. Includes matches like Առաջատար խումբերու դասաւորումը, Ինթեր Սիլան 13 10 3 0 27-14 33.

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆուտպոլի առաջնութեան տասնչորրորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 2 columns: Team names and scores. Includes matches like Լորիան - Սոչօ 1-3, Դորսօ - Սէնթ Էթիէն 1-0.

Table with 6 columns: Team names and statistics. Includes matches like Առաջատար խումբերու դասաւորումը, Լիոն 15 13 1 1 31-10 40.

ՍՊԱՆԻՈՑ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆուտպոլի առաջնութեան տասնմէկերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 2 columns: Team names and scores. Includes matches like Պարսելոնա - Վիլլառէալ 4-0, Աթլէթ. Մատրիտ - Ռէալ Սոսիէտ 1-1.

Table with 6 columns: Team names and statistics. Includes matches like Առաջատար խումբերու դասաւորումը, Պարսելոնա 12 9 2 1 31-10 29.

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԹԷԼԷԹՈՆ 2006-ԷՆ ԵՏՔ

Շարունակուած էջ 1-էն

Այս գօտեպնդիչ երեսոյթին դիմաց սակայն, կ'արձանագրենք ժողովրդական մասնակցութեան ցաւալի վայրէջքը: Ժողովրդական խաւերուն մօտ ակնյայտ էր անտարբերութիւնը: Անոնք բարձրաձայն կը յայտնեն իրենց անվստահութիւնը, հաւատքի պակասը: Այդ բոլորը՝ հետեւանք կը թուին հանդիսանալ պատկան իշխանութիւններու կողմէ կիրարկուած անբարեացակամ, ապիկար, անարդար, բաղաձայնութեան մը, որ խորունկ վիճակ մը բացած է մեր հայրենարանի հատուածներուն եւ իշխանութիւններուն միջեւ: Փաստ է, որ չկայ հաղորդակցութեան նշոյլն իսկ: Ընդհակառակը՝ առկայ է անտեսումը, ատելութիւնը: Մինչ, մեր հայրենարանի ժողովուրդը իր բաղդին թողլուած կը տուայտի ապրուստի տագնապներու մէջ, ինչպէս պիտի գրէր հայրենարանի թղթակիցը. « Ցաւօք, ազատագրումից 13 տարի անց (Շուշի) քաղաքը շարունակուած է մնալ հիմնականում միլիտարիզմի Մարդկանց

դէմքին գրուած է աղատութիւն:»: Այս է տիրող վիճակը ընդհանրապէս, իսկ մասնաւորապէս՝ սահմանամերձ գիւղերու մէջ:

Հայրենի իշխանութիւնները կոչուած են տէր կանգնելու իրենց հոգատարութեան յանձնուած ժողովուրդին: Հայրենասիրութիւնը գերիշխող պէտք է դառնայ մեր գի մէջ: Որքան կարեւոր է նախապահաշինութիւնը, դպրոցակառուցումը, հիւանդանոցներու բարձրացումը, նոյնքան հիմնական է իրենց բաղդին լուծուած մեր հարգատներուն ապրուստի ապահովումը: Զուգահեռ՝ աշխարհագրական եւ մարդկային զոյգ մակարդակներու վրայ պէտք է տարածել մեր հայրենաշինութեան գործընթացը, դարմանելու համար համատարած այլ կործանարար առկայ յուսալուծութիւնը:

Պիտի գա՞յ այն օրը, որ ազգով մէկ, առանց դոյզն խորութեան, վերապահութեան ու կասկածանքի՝ մեր մեծ ու փոքր նուէրները պիտի մուծենք մեր հայրենաշինութեան սրբազան արշաւներուն...:

Ս.Դ.Յ.Կ. ՎԱՐԻՉ ՄԱՐՄՆԻ ԶԱՆԴԻՊՈՒՄԸ Լ.Ղ.Յ.Ի ՆԱԽԱԳԱՅ ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ԶԵՏ

Շարունակուած էջ 1-էն

Չունելով Ղարաբաղի նախագահի ներկայութիւնը, յոյս չայտնեց որ բանակցութեանց գործընթացը իր աստիճանական զարգացումը կ'ունենայ ի նպաստ Ղարաբաղի հիմնահարցի բարուք լուծման: Նախագահ Ա. Ղուկասեան ցաւ յայտնեց որ ցարդ կատարուած ճիգերը ոչ մէկ դրական եզրայնագումի չեն հասած: Նշեց նաեւ որ այս կապակցութեամբ միջազգային մակարդակներու վրայ եղած բանակցութիւններն ալ տեղ քաջլի մէջ են, քանի որ ազերիները յամառօրէն կառչած կը մնան իրենց ժխտական կեցուածքին վրայ: Մինչ

այդ ան խիստ կենսական նկատեց համայն հայութեան միացեալ ճիգերով Արցախի հայութեան ընկերային եւ տնտեսական պայմաններու բարելաւումը: Այս կապակցութեամբ շեշտուեցաւ որ սփիւռքը տակաւին իր լիակատար ուժակառութեամբ չէ որ իր մասնակցութիւնը կը բերէ Արցախի վերելքին: Միւս կողմէ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութիւնը տակաւին համաշխարհային ճանաչում ստացած չըլլալուն համար իրենց կը զլացուի միջազգային տնտեսական օժանդակութիւնները:

Շուրջ մէկ ժամ տեւող սոցիալական հանդիպումն անցաւ բարեկամական անկեղծ մթնոլորտի մէջ:

ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ

Յունուար 21, 2007, Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Գոլէֆի նախկին Սաներու Միութեան կողմէ:

ԱՇԽԱՏԱԻՈՐՆԵՐՈՒ ԿԱՐԻՔ

Փասատիւնայի մէջ հաստատութիւն մը կարիք ունի աշխատաւորուհիներու cash register-ի վրայ: Հեռաձայն՝ (626) 833-2331:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆՊ» ԸՆՈՒՄՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ

CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ (ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԸՐՊԵՆՔ, ԼԱ ԲՐԵՄԵՆԹԱ) ԶԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00

ՔԱԶ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 11:00-ից 1:00 Կլէնտէյլի 26-րդ կայանից



### ՇՈՒԱՐԱԾ ԱՍԵՐԻԿԱՆ

#### Շարունակում է 6-էն

ցուծիւններ հաստատելու առաջարկը կու գա Թոնի Պլէրէն եւ ամերիկեան յանձնախումբի ղեկավար ձէյմա Պէյքըրէն: Սպասելով որ այդ երկու երկիրներու հետ շփումները արդիւնք կը սկսին տալու, երեւոյթ մը գոր կարելի չէ նախատեսել, օրուայ նախագահ Պուշ հանդիպում եւ խորհրդակցութիւն կ'ունենայ Իրաքի վարչապետին հետ, որ ի վիճակի չէ երկրէն ներս գորաւոր ղեկավար մը ըլլալու, այս անգամ Իրաքէն դուրս, Յորդանանի մէջ, եւ Յորդանանի թագաւոր

Ապտուլլայի գործակցութեամբ: Կը խօսուի նաեւ հայցել գործակցութիւնը Եգիպտոսի, Սէուտական Արաբիոյ եւ ուրիշներուն, կարենալ «ընթացք» իրապէս փոխելու համար:

Մինչ այս տողերը կը գրուին, այս կը թուի ըլլալ կացութիւնը Իրաքէն ներս: Ի հարկէ, կարելի է հարց տալ թէ որքանով այս բոլորը պիտի կարենան կացութեան մէջ հիմնական փոփոխութիւն մտցնել, որպէսզի Ամերիկան կարենայ պատուով դուրս գալ, եւ իր բանակը տուն բերել:

Ապագան տակաւին մուտ է...

### ՄԵԾ ԵՐԱԺՇՏԱԳԵՏ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

#### Շարունակում է 7-էն

ղեցական եւ ժողովրդական երաժշտութեանց միաձոյլ արտայայտութեան: Կոմիտաս վարդապետ այդ երկուքը «հարազատ քոյր ու եղբայր» համարելով մշակած է իր Պատարագը «առատօրէն յագեցնելով զայն բուն ժողովրդական երաժշտութեան տարրերով»:

1919 թուին թղթակցութիւններ կատարուած են ընդմէջ Կոմիտասի ծննդավայր Կուտիսայի առաջնորդարանին ու Կ. Պոլսոյ Զաւէն Պատրիարքին, իմանալու համար վարդապետի ընկճեալ վիճակի մասին ու ընդփոյթ օգնութիւն հասցնելու անոր կարիքներուն: Նշուած նամակներուն մէջ հարկ կը տեսնուէր մանրամասնօրէն ցուցակագրելու Կոմիտասի վերաբերեալ գրական գոյքը, որոնք 1917-ի Հոկտեմբերին հայճեպով դրուած էին սնտուկներու մէջ ու պահուած Բերայի Ազգային Մատենադարանին մէջ: Ակնարկուած սնտուկները, ըստ 1920 Մարտ 31-ի նամակի մը, կը բովանդակէին «հին ձեռագիր մատենաներ, զանազան գիրքեր, իր հեղինակած երգարանները, տետրակներ ու սրինգներ, ընդամէնը հինգ սնտուկ»:

Կոմիտաս վարդապետի Փարիզ փոխադրուելէն անմիջապէս ետք, հոն կազմուեցաւ ինսամատար յանձնախումբ մը, որուն անունով վաւարչապետ Մ. Վրդ. Քիպարեան եւ Մարգրիտ Բաբայեան 1920 Յուլիս 15 թուակիր նամակով մը կը հաղորդէին Զաւէն Պատրիարքին յանձնախումբի կազմութեան մասին, առաջարկելով նաեւ որ իրենց տրամադրութեան տակ դրուէր վարդապետին տպագրեալ երգարանները: Կոմիտասի թողո՞նով հետաքրքրուած

էր նաեւ Մայր Աթոռը, որ դիւանապետ Կորիւն Եպիսկոպոսի ստորագրութեամբ եւ 1920 Դեկտ. 28 թուակիր նամակով, Զաւէն Պատրիարքին գիր մը յղած էր յանուն Գէորգ Ե. Կաթողիկոսին:

1923ի սկիզբը յիշեալ հինգ սնտուկները բացուեցան ու բաղդատուեցան նախապէս պատրաստուած ցուցակին հետ՝ ի ներկայութեան Մեսրոպ Եպս. Նարոյեանի, Յակոբ ձ. Սիրունիի եւ Գէորգ Եղուպեանի, ու ամէն կերպով համապատասխան գտնուեցան նախորդ ցուցակին հետ գոր պատրաստած էին Տրդատ քահանայ Պօյաճեան եւ Միհրան թումաճան 1920 Օգոստոս 4ին: Յետ քննութեան սնտուկները վերստին կնքուեցան Նարոյեան Եպիսկոպոսի անձնական կնիքով ու որոշուեցաւ պահել Բերայի նոյն Ազգային Մատենադարանին մէջ մինչեւ որ ապահով միջոցաւ կարելի ըլլար գանոնք Մայր Աթոռ Ս. էջմիածին դրկել:

Կենսական հարցը սակայն վարդապետին առողջական վիճակին էր, որուն համար 1927 Հոկտեմբեր 22ի նամակով վաւարչապետ Եպս. Քիպարեան Փարիզէն կը հաղորդէր նորընտիր Մեսրոպ Պատրիարք Նարոյեանին յայտնելով որ «Կոմիտաս վարդապետի առողջական վիճակին մէջ բարւոքման նշաններ չկային», այլ ընդհակառակը ջղազրգիւ բորբոքումներ, եւ թէեւ շունչը վրան, պիտի ապրէր եօթ տարիներ եւս հիւանդանոցներու մէջ, դառնալէ ետք հայ ժողովուրդի Մեծ Երաժիշտն ու Մեծ Նահատակը ապրիլեան եղեռնին, տալէ ետք հայ եկեղեցիին ու հայ ժողովուրդին անկորնչելի բաժինը իր ստեղծագործ միտքին ու հանձարին:

### ՉԱՐԵՐԸ ԿԸ ԳՐՈՒՄ ԵՒ ԲԱՐԻՆԵՐԸ ԿԸ ՄՐԱՓԵՆ

#### Շարունակում է 14-էն

արշաւը, նորանոր նուաճումներու գրոհով:

Աւաղելի է, որ բարին՝ գիշեր եւ ցերեկ մահաբուն կը ննջէ ու չի լսեր կամ չ'ուզեր լսել իր գլխուն վերեւ աշխարհացուց ուռմբերու որոտը: Ոքան ջանար՝ դուն քեզ գրկել ինթական բարիքներէն, այնքան ազատ ու մեծ պիտի զգաս եւ հասարակաց զգացումէն պատուուած:

Ծանրագոյն մեղքը, որ կը ծանրանայ բարեպաշտ մարդուն վրայ, այն է, որ ինքզինք պատասխանատու չի զգար չարին ապօրինութիւններուն դէմ ըմբոստանալու:

Ինչո՞ւ եւ որմէ՞ կը վախնաս խօսելու, բողոք եւ բռնուցք բարձրացնելու երկնային օրէնքները անգոսնող անբարիշտներու դէմ:

Եթէ ճշմարտապէս Քրիստոսի աշակերտ ես, պէտք է ցոյց տաս հաւատքը մարտահրաւիրներու դէմ դիւցազնական մաքառումներով, ոչ թէ հաւատքը գրպանիդ մէջ պահես մասունքի նման:

Ամէն ժամանակ, չարին պատճառած աւերները եւ զուլումները եղած են բազմապիսի ու բազմատանջ:

Ոճրագործները, որ կը խոշտանգեն անմեղ գոհերը, աւելի շուտ դուրս կուգան բանտախոցերէն, քան իրենց գոհերը հիւանդանոցներէն:

Նայեցէք պահ մը ձեր շուրջը եւ աւելի հեռուն ու պիտի տեսնէք, որ մեղքը վարագուրած է մարդոց տեսողութեանէն, ինչ որ լոյս ու ճառագայթ է:

Ես՝ քրիստոնեայ չեմ կոչեր այն կրօնակները, որ իմաստուն է իր մտածումներով եւ հեթանոս՝ իր քարոզներով:

Երկրի վրայ ծնած չէ ու պիտի չծնի առաքինի մարդ մը, որ իր շնորհագարդ հոգիով հաւասարի փրկչին աստուածային բնութեան:

Քրիստոս աշխարհ չեկաւ, որ փրկէ մարդկային փոքրամասնութիւն մը, այլ եկաւ փրկելու բովանդակ մարդկութիւնը, առանց ցեղի ու գոյնի խտրութեան:

Քրիստոնէութիւնը առանձնաշնորհեալ հասարակութեան մը կրօնք է, ինչպէս Յուդայականութիւնը:

Հրեաները կ'ուզէին աստուածապաշտութիւնը սեփականացնել, յօգուտ իրենց ցեղին ու կը մերժէին այլ ժողովուրդներու փրկութիւնը:

Նախաքրիստոնէական դարաշրջաններուն բեւեռային հեռաւորութիւն մը կը բաժնէր մարդկային զանգուածները իրարմէ: Գոյութիւն ունէին միայն հրեաներ եւ հեթանոսներ, յոյներ եւ բարբարոսներ, ազատներ եւ ստրուկներ, ցեղային բաժանումներ եւ դասակարգային տարբերութիւններ, որոնք կը գիւնէին սիրտերը ատելալովա՛ւ՝ իրարու դէմ:

Այս խտրական ոգին կը կոտորակէր մարդը ու կը բարոյագրկէր մարդուն մէջ անձնաւորութիւնը:

Ներկայ սանձարձակ ժամանակներուն՝ մեղքին այնպիսի բարձրունք մը տրուած է, որ ընկերային գոծառութիւնները եւ յարաբերութիւնները կը կատարուին Աստուծոյ վկայութեամբ եւ սուսին ու երգումին հաւաստումներով:

Գիտութիւնը՝ հակառակ իր գրոհային յառաջդիմութեան, չկրցաւ մարդուն գոյութեան հաւատալի բացատրութեան մը տալ, աստուածապաշտութեան ժխտումով, աւելի խորացուց եւ բարդացուց կեանքին նշանակութիւնը:

### ՏԱՆԸՆ ՌԱՍՄՅԵՆՏ ԵՒ ԱՍՏՏԱՄ ՇԻՄԵՅՆ

#### Շարունակում է 6-էն

ցնցուած է ամերիկացի ժողովուրդը, որ սթափելով Պուշեան քարոզչութեան թմբերէն, երկրին ղեկը յանձնեց Դեմոկրատներուն այն գլխաւոր ակնկալութեամբ որ վերջ տրուի այս վնասակար պատերազմին: Վնասակար՝ մանաւանդ Ամերիկայի համար, որուն համառոտարհային վարկը որեւէ ժամանակէ աւելի ցած մակարդակի հասած է, եւ որ քարիւղով չի վերականգուել:

Այս սխալ քաղաքականութեան սրբագրումի նախանշանները երեւալ սկսած են արդէն. Իրաքէն քաշուելու մասին խորհրդակցութիւններ կը կատարուին, քաշուելէն աւելի քաշուելու ձեւին մասին կը մտածուի, ինչպէ՛ս քաշուիլ որ պարտութեան տպաւորութիւն չգործէ:

Ինչպէս նախապէս ըսինք, նախագահը տակաւին երկու տարուան շրջան մը ունի կաշկանդուած ազատութիւնով, որուն թելերը կապուած են Ներկայացուցիչներու Տան եւ Մերակոյցի Դեմոկրատ մեծամասնութեան: Այսուհանդերձ, Պուշի կրած բարոյական հարուանք զապեց իր պոռոտախօսութիւնն ու ամբարտաւան շարժումները: Յառաջ եկած փոփոխութիւններուն գլխաւոր գոհը եղաւ պաշտպանութեան նախարար Տանըլտ Ռամսֆելտը: Նախագահ Պուշ երբեք պիտի չուզեր գրկուիլ իր ամենէն վստահելի ու համակարծիք գործակիցէն, որուն խորհուրդները վճռական եղան Ամերիկայի Իրաքեան պատերազմի ճահճախուտին միջոցաւ մէջ:

Մինչ այս պատերազմէն ամերիկեան կողմի երկու գլխաւոր հերոսներէն նախագահ Պուշ տակաւին կը վայելէ իր նախագահութիւնը, իսկ պաշտպանութեան նախարարը պարզապէս միայն իր պաշտօնէն գրկուելու բարոյական պատիժը կրած է, Իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյն երկար ժամանակ բանտարկուած մնալէ յետոյ, մահուան դատապարտուած է: Ամերիկեան ներշնչումով դատական բեմադրութեան մը յետոյ, նախագահ Ս. Հիւսէյն ամբաստանուեցաւ իբրեւ մարդկային իրաւունքները ոտնակոխած, իր քաղաքական հակառակորդները բանտարկած կամ սպաննած բռնատէր մը:

Ճիշդ կրնան ըլլալ այդ ամբաստանութիւնները, սակայն, նոյնքան ճիշդ է որ ոչ մէկ երկիր կառավարող ղեկավար գերծ եղած է նման յանցանքներէ: Ս. Հիւսէյն եւս բացառութիւն չէր եւ հարիւրներու կամ հազարներու մահուան պատճառ դործընթացին մէջ անխուսափելի է յանցաւորներու կողքին անմեղներու ալ դատապարտումն ու սպաննութիւնը: Բայց, Սատտամ Հիւսէյն ինչ որ ըրաւ՝ իր երկրին մէջ իր ժողովուրդին ըրաւ: Մինչ նախագահ Պուշ եւ Ռամսֆելտ անկախ ու գերիշխան պետութեան մը վրայ յարձակեցան հարիւր հազարներու մահուան պատճառ դառնալով եւ ամբողջ երկիր մը աւերելով: Նախագահ Պուշի գլխաւորութեամբ եւ Անգլիոյ վարչապետ Թոնի Պլէրի ձայնակցութեամբ կատարուած համաշխարհային քարոզչութեամբ փորձեցին մարդկութիւնը համոզել, թէ այս պատերազմով Իրաքի «զանգուածային բնաջնջման գէնքերէն» զայիք վտանգը պիտի կանխեն, միաժամանակ, բռնատիրութեան վերջ տալով, դեմոկրատի պիտի հաստատեն Իրաքի մէջ: Այս պատճառաբանութեամբ նախադրական մը կատարուեցաւ, երկիրը քարուքանդ եղաւ ու գրաւուեցաւ, բանտարկուեցան ու սպաննուեցան այդ վարչաձեւին պատասխանատուները, բայց Իրաք խաղաղ եւ ապահով երկիր մը չդարձաւ: Ընդհակառակը, նախապէս խաղաղ եւ ապահով այդ երկիրը ահաբեկչութեան եւ սպանդի բոյն մը դարձաւ՝ առօրեայ պայթումներով եւ 50-60 մարդու սպաննութեամբ: Ոչ ալ դեմոկրատի ստրվեցաւ Իրաքի ժողովուրդը:

Իսկ ո՞վ պիտի ստրվեցնէ ամերիկեան կառավարող շրջանակներուն որ ուրիշ երկիր գրաւելով եւ ժողովուրդներու վրայ բռնանալով դեմոկրատի կարելի չէ պարտադրել:

Դեմոկրատիսին արտածման ապրանք չէ: Ան ձեռք կը ձգուի խաղաղ եւ ապահով պայմաններու տակ ապրող ժողովուրդի մը սեփական փորձառութեամբ, ժամանակով ու դատախարակութեամբ, բայց երբեք՝ բռնութեամբ:

Բռնութիւնը հերքումն իսկ է դեմոկրատիին:

### ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

**ԳՐԻԳՈՐ ԽՊՈՅԵԱՆԻ** մահուան տխուր առիթով (մահացած Պէյրուտի), Փասատինայի Հ.Մ.Մ.ի վարչութիւնը իր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալ այրիին, զաւակներուն, ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար իր եղբօր Տէր եւ Տիկին Յակոբ Խպոյեանին:

**ԳՐԻԳՈՐ ԽՊՈՅԵԱՆԻ** մահուան տխուր առիթով «Մասիս»ի խմբագրութիւնն ու աշխատակազմը իր վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար իր եղբօր Յակոբ Խպոյեանին:



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:  
Proud Past, Exciting Future.



## AGBU Generation Next Mentorship Program

### Holiday FUNdraiser

Comedy Show and Mixer  
with Lory Tatoulian

Support the next Generation  
by supporting Generation Next!

\$20.00 Donation

Friday, December 8, 2006  
8:00pm - 10:00pm

In the famous Ardavazt Theatre

AGBU Pasadena Alex Manoogian Center  
2495 E. Mountain St.,  
Pasadena, CA 91104

Buy your tickets in advance at:  
626 794 7942 or [www.agbugennext.org](http://www.agbugennext.org)

# NEW YEAR'S EVE DINNER-DANCE

ORGANIZED BY AGBU - AYA  
GLENDALE-PASADENA CHAPTER

ENTERTAINMENT  
&  
SURPRISES

SUNDAY, DECEMBER 31, 2006  
8:00PM

AGBU ALEX MANOOGIAN CENTER  
2495 E. MOUNTAIN STREET  
PASADENA, CA 91104

*Music by DJ Heartbeat  
Catering by La Fogata*

Special Program and Menu for  
Children in a Separate Hall

Adults \$75  
Children 12 and under \$35  
Children 5 and under Free

RSVP - LIMITED SEATING  
Call the AGBU Alex Manoogian Center  
(626) 794-7942

### AGBU CENTENNIAL SPONSORS

**Commerce Casino**  
LOS ANGELES  
6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • [commercecasino.com](http://commercecasino.com)

**CROWNE PLAZA**  
HOTELS & RESORTS

Bank of Orange County is a full service bank prepared to meet the needs of both small and large businesses.

**BANK of ORANGE COUNTY**  
Commercial Real Estate  
Term Loans and Lines  
Free Business Checking  
High Rate Money Market

**BOC**  
A Division of Placer Sierra Bank

**Contact:**  
Gus Ghusayni  
Senior Vice President  
411 N. Central Avenue  
Glendale, CA 91203  
[bankoforangecounty.com](http://bankoforangecounty.com)  
(818) 548-2720